

ՄԻԱԼՆԵՐԻ ԿՈՄԵԴԻԱՆ

ԿՈՄԵԴԻԱ ՀԻՆԴ ԱՐԱՐՎԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՍՈՒՆՈՍ—Եփեսոսի զուբսը:

ԷԳԵՈՆ—Սիրակուզացի վաճառական:

ԱՆՏԻՖՈՆՈՍ ԵՓԵՍՈՍՑԻ } Երկվորյակ եղբայրներ, Էգեոնի և
ԱՆՏԻՖՈՆՈՍ ՍԻՐԱԿՈՒԶԱՑԻ } Էմիլիայի որդիները:

ԴՐՈՄԻՈ ԵՓԵՍՈՍՑԻ } Երկվորյակ եղբայրներ, Էրկու
ԴՐՈՄԻՈ ՍԻՐԱԿՈՒԶԱՑԻ } Անտիֆոնաների սպաքավորները:

ԲԱՆՏԱԶԱՐ—Վաճառական

ԱՆՋԵԼՈ—Ոսկերիչ:

ԱՌԱՋԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ—Անտիֆոնոս սիրակուզացու բարեկամը:
ԵՐԿՐՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆ—Անջելոյի սպաքատերը:

ՊԻՆՉ—Վաճառական

ԷՄԻԼԻԱ—Էգեոնի կինը, Եփեսոսի վաճառայրը:

ԱԴՐԻԱՆԱ—Անտիֆոնոս Եփեսոսցու կինը:

ԼՈՒԹԻԱՆԱ—Սրա քույրը:

ԼՈՒՍԻ—Ադրիանայի աղախինը:

ԿՈՒՐՏԻՉԱՆՈՒՀԻ:

Բանապահներ, ոստիկաններ և այլ սպասավորներ:

Տեսարանը՝ Եփեսոսում:



ԱՐԱՐԳԱՆ՝ ԱՌԱՋԻՆ

Տեսարան առաջին — Մի սրան դուխի պալատում:

Մտնում են դուխը, էգեոնը, բանտապահը, ոստիկաններ և այլ սպասավորներ:

ԷԳԵՈՆ. — Շարունակի՛ր, Սուլինոս, մի՛ խնայիր կյանքիս,

Թող մահվան վճիռը վերջ տա տանջանքիս:

ԴՈՒՔՍ. — Զուր մի աղերսիր, ով վաճառական սիրակուղացի,
ես անգոր եմ մեր օրենքը խախտել.

Թշնամությունն ու գժտությունները, որոնք բխեցին

Ձեր դուք ի դաժան վիրավորանքից,

Որ նա հասցրեց մեր շատ պատվավոր

Եվ վաճառական երկրացիներին, —

Որոնք, ձգտելով իրենց կյանքերը դրամով փրկել,

Իրենց արյունով կնքեցին նրա բիրտ օրենքները, —

Մեր սպառնական դեմքից վանո՛ւմ են ամեն գթություն:

Այնքան ժամանակ, քանի մահացու

Եվ ազգամիջյան վեճերը կապրեն

Մեր և ապստամբ ձեր մարդկանց միջև,
 Խիստ հանդիսավոր հավաքույթներում
 Վաղուց վճիռ է եղել երկուստեք,
 Խզել ամենայն հարաբերություն
 Մեր քաղաքների միջև ռիսերիմ.
 Որ աշուհեմու յուրաքանչյուր մարդ,
 Որք ծնվել է Եփեսոսի մեջ,
 Եթե երևա Սիրակուզայի տոնավաճառում,
 Կամ թե շուկայում,
 Նույնպիսի կարգով, ով որ ծնված է սիրակուզացի,
 Թե Եփեսոսի ծոցին մոտենա, մահվան ենթարկվի,
 Իր ունեցվածքը բռնագրավվի և դուքսին տրվի,
 Եթե այդ մարդը իր կյանքը մահից փրկելու համար
 Չտա մեկ հազար մարկ փրկավճար:
 Քո ամբողջ ինչքը, բարձր հաշվելով,
 Հարյուր մարկից էլ պակաս է նույնիսկ,
 Ուստի օրենքով դատապարտված ես դու մահապատժի:
 ԷԳՅՈՆ.— Մխիթարվում եմ սակայն նրանով, երբ մութը պատի
 Դատավճիռդ ինձ իմ ցավերից իսպառ կազատի:
 ԴՈՒՔՍ.— Սիրակուզացի, այժմ շատ հակիրճ,
 Պատմիր, թե ինչու լքեցիր հողը քո հայրենական,
 Եվ ինչու համար Եփեսոս եկար:
 ԷԳՅՈՆ.— Ինձ ոչինչ այնքան ծանր չի ճնշում,
 Քան անպատմելի իմ զրկանքների պատմությունն անել:
 Սակայն, որպեսզի աշխարհը տեսնի, որ իմ վախճանը
 Ոչ թե արդյունք էր ստոր արարքի, այլ բախտի բերման,
 Ես ձեզ կպատմեմ իմ պատմությունը,
 Այնքան, որքան ինձ վիշտս թույլ կտա:
 Սիրակուզայի մեջ եմ ծնվել ես,
 Եվ կհավ հմ թուել այնպիսի մեկին,
 Որ երջանիկ էր միայն ինձանով,
 Ես էլ իրենով, եթե մեր բախտը դաժան չլիներ:
 Յնծովյան մեջ էի նրա հետ ապրում: Մեր վաստակն աճեց,
 Դեպ էպիգամնոն հաճախ կատարած
 Իմ բարեհաջող ծովագնացությունը,
 Մինչև որ մեռավ իմ վերակացուն,

Եվ իմ աշխարհող արված բարիքի ծանրագույն հոգսը
 Ինձ կորզեց կնոջս արբեցնող գրկից։
 Դեռ չէր լրացել վեց ամիսը իմ բացակայության,
 Երբ իմ տիկինը, գրեթե հյուծված այն քաղցր բեռից,
 Որ կինն է կրում, ճանապարհ ընկավ
 Եվ շուտ, անվնաս ժամանեց այնտեղ, որտեղ հս էի։
 Կարճ ժամանակ անց, նա մի բախտավոր
 Մայր դարձավ երկու դեղեցիկ մանկանց,
 Մեկը մյուսին այնքան նմանակ,
 Որ նրանց միայն հնարավոր էր անունով ջոկել։
 Եվ հենց նույն ժամին, և նույն պահոդուհում
 Նման երկունքով ազատվեց նույնպես
 Մի հասարակ կին, ծնելով երկու նույնադեմ որդի։
 Նրանց ծնողները չքավոր էին,
 Ուստի գնեցի այդ մանուկներին, մեծացրի նրանց,
 Որ զավակներիս ծառաներ դարձնեմ։
 Իմ կինը, որը քիչ չէր պարծենում իր տղաներով,
 Միշտ թախանձում էր տուն վերադառնալ։
 Ես դժկամորեն համաձայնվեցի. ավա՞ղ, շատ հապճեպ
 Մենք նավ նստեցինք։
 Էպիդամնոնից մի մղոն էինք նավարկել հեռու,
 Երբ որ անդունդը՝ մշտնջենական հողմին հնազանդ,
 Մեղ ողբերգական աղետ գուշակեց։
 Շուտով փրկության մեր հույսը մարեց,
 Որովհետև այն խավարած լույսը, երկնքից եկած,
 Մեր սարսափահար հոգիների մեջ
 Լցրեց տազնապար շուտափուլի մահվան,
 Որին, ես, թեպետ, մեծ ուրախությամբ կուզեի փարվել,
 Բայց անլռելի ողբը իմ կնոջ,
 Եվ արտասուքը, որ նա նախապես
 Թափում էր գալիք վտանգի հանդեպ,
 Եվ սրտաճմրիկ աղաղակները այդ սիրուն մանկանց,—
 Որ լալիս էին վտանգին անգետ,—
 Ինձ հարկադրեցին միջոց փնտրելու,
 Որ նրանց և իմ մահն հետաձգեմ։
 Այդպես էլ եղավ, որովհետև այլ փրկություն չկար։

Նավաստիները մեր մակույկի մեջ փրկություն գտան,
 Սուզվելու պատրաստ նավը մեզ թողած:
 Իմ կինն ավելի հոգատար դեպի վերջնածին որդին,
 Կապել էր նրան մի փոքրիկ կայմից,
 Որոնց պահում են նավաստիները փոթորկի համար.
 Իսկ այդ մանուկից կապել էր մյուս զուգից մի հոգու
 Նույն կերպ վարվեցի մյուս զուգի հետ:
 Այս ձևով ահա տեղավորելով երեխաներին,
 Իմ կինը և ես,—սեեռելով մեր աչքերը նրանց,
 Ում վրա մեր ողջ հոգսն էր սեեռած,—
 Ամուր կապեցինք մեզ նավակայմից,—
 Ես մի ծայրիցը, նա մյուս ծայրից,—
 Եվ հողմին հլու առաջ լողալով
 Քշվեցինք ուղիղ դեպի Կորնթոս, մեր կարծածի պես:
 Վերջապես, արևը երկրին փայլելով
 Յրեց մեզ ճնշող մառախուղները,
 Եվ իր տենչալի լույսի շողերով
 Ծովը հանդարտվեց, և այն ժամանակ մենք նկատեցինք
 Հեռվից դեպի մեզ եկող երկու նավ,—
 Մեկը Կորնթոսից, իսկ մյուս նավը էպիդավրոսից,—
 Բայց նախքան նրանք կմոտենային... օ՛հ, թույլ տուր լռել,
 Ինքզի կարող ես վերջը գուշակել...
 ԴՈՒՔՍ.— Ո՛չ, շարունակիր, այդպես մի կտրիր քո խոսքը,
 Ծերուկ,

Թեպետ չենք կարող ներում շնորհել,
 Սակայն կարեկցել մենք քեզ՝ կարող ենք:
 ԷԳԵՈՆ.— Օ, աստվածները թե կարեկցեին, չէի հանդգնի
 Այժմ ես նրանց անգութ կոչելու.
 Որովհետեւ այդ երկու նավերը
 Տաս մղոն էին իրարից հեռու,
 Երբ մենք բախվեցինք մի հսկա ժայռի,
 Որն, հանկարծակի մեր դեմ ցցվելով,
 Մեր անօդնական նավը մեջտեղից երկու կես արեց.
 Այնպես որ դժբախտ այդ անջատումով,
 Հակատաղիրը մեզ երկուսին էլ
 Թե՛ ուրախություն թե՛ վիշտ վիճակեց:

Իմ տարաբախտ կին... նրա բաժինը, վշտով ոչ նվազ,
 Սակայն իր բեռով թվալով թեթև,
 Ավելի լարագ քշվեց հոսանքով.
 Եվ աչքերիս դեմ, թե չեմ սխալվում,
 Կորնթացի քաջ ձկնորսներն իսկույն
 Այն երեքին էլ փրկեցին մահից:
 Վերջապես մյուս նավն էլ մեզ վերցրեց.
 Նավաստիները երբ որ իմացան, թե ում են փրկել,
 Ջերմ ողջունեցին նավաբեկ դարձած իրենց հյուրերին:
 Ուղեցին անգամ այն ձկնորսներից կնոջս էլ վերցնել,
 Բայց նրանց նավը դանդաղ էր լողում,
 Ուղևորվեցին, ուստի, նրանք տուն:
 Այժմ դուք գիտեք, ինչպես զրկվեցի երջանկությունից.
 Որ դաժան բախտը կյանքս երկարեց,
 Ասելու համար ձեզ իմ տխրալի պատմությունները:
ԴՈՒԹՍ.— Եվ հանուն նրանց, որոնց ողբում ես,
 Շնորհ արա ինձ լրիվ պատմելու,
 Թե մինչև այսօր ինչ է պատահել նրանց և քեզ հետ:
ԷԳՆՈՆ.— Իմ կրտսեր տղան՝ անդրանիկ հոգսն իմ,
 Երբ որ տասնևութ տարեկան դարձավ, հարցուփորձ արավ
 Իմանալու թի՛ իր եղբայրն ուր է. գլուխս տարավ
 Անվերջ խնդրելով, որ թույլ տամ իրեն,
 Որ իր ծառայի ընկերությամբ,—
 Որը իր նման անջատված էր իր կորած եղբորից,
 Եվ միայն նրա անունն էր կրում,—
 Ճանապարհ ընկնի նրան գտնելու:
 Եվ ամբողջ սրտով ցանկանալով իմ կորածին գտնել,
 Համաձայնվեցի նրա կորստին, ու՞մ սիրում էի:
 Ամբողջ հինգ տարի
 Ողջ Հունաստանը ոտնատակ տվի,
 Մինչև Ասիայի սահմաններն հասա,
 Իվ ետ դառնալով հեկա Եփեսոս,
 Նրան գտնելու հույսը կորցրած,
 Չուզելով սակայն առանց որոնման
 Թողնելու ոչ մի մարդաբնակ վայր:
 Եվ այստեղ պետք է ավարտվի կյանքիս տխրագին վեպը,

Ուրախ կլինեի ես այդ վաղ մահով,—
 Միայն թե բոլոր պրպտումներս համոզեին ինձ,
 Որ կենդանի են իմ որդիները:
 ԴՈՒՔՍ.— Դժբախտ էգեոն, ճակատագիրը
 Քեզ վիճակել է մեծ փորձություններ:
 Հավատացիր ինձ, թե դա չլինեի մեր օրենքին դեմ,
 Ընդդեմ իմ թագին, և իմ երդումին ու աստիճանին,—
 Որոնց իշխաններն իրավունք չունեն
 Զանց առնելու բնակ, թեկուզ կամենան,—
 Սիրով փաստաբան կդառնայի քեզ:
 Բայց, շնայած դու դատապարտված ես մահապատիժի,
 Եվ այդ վճիռը անխախտ է արդեն,
 Մակայն, մեր պատվին մեծ հարված տալով,
 Ես քեզ ուղում եմ օգտակար լինել, որքան կարող եմ:
 Այդ նպատակով, ով վաճառական,
 Ես այս մի օրը շնորհում եմ քեզ,
 Օգնությամբ փորձիր քո կյանքը փրկել:
 Դիմիր քո բոլոր բարեկամներին,
 Որոնք ապրում են Եփեսոսի մեջ,
 Խնդրով կամ պարտքով պահանջված գումարն իսկույն լրացրո՛ւ
 Եվ ապրիր կրկին. եթե ոչ, մահից դու չես ազատվի:
 Բանտապահ, սրան բա՛նտ առաջնորդիր:
 ՐԱՆՏԱՊԱՀ.— Իսկույն, իշխան իմ:
 ԷԳՆՈՆ.— Էգեոնն է գնում անհոյս, անպաշտպան,
 Հետաձգելով ժամկետը մահվան:

Գնում են:

Տեսարան երկրորդ — Հրապարակ:

Դավիս ԼԵ Անտիֆոնոս սիրակուզացին, Դրոմիո սիրակուզացին
 և առաջին վանառականը:

Ա. ՎԱՆԱԿԱՆ.— Ուստի, դու ասա էպիդամնից ես,
 Եթե չես ուզում ունեցվածքդ խլեն:
 Այստեղ գալու համար սիրակուզացի
 Մի վաճառական և կալանված այսօր:
 Չկարողանալով փրկանք վճարել,

Քաղաքում տիրող կարգի համաձայն,
Հոգնած արևը մինչև մայր մտնի, նա մեռնելու է:
Ահա այն փողը, որ դու ինձ տվիր պահելու համար:
ԱՆՏԻՖ ՍԻՐ.— Այդ փողը, Դրոմիո, դու «Կենտավրոս» տար, ուր
մենք ենք իջել:

Եվ սպասիր ինձ մինչև իմ գալը:
Մի ժամ է մնում մինչև ճաշելը:
Մինչ այդ, կդիտեմ ես այս քաղաքը,
Վաճառականներին կծանոթանամ,
Իսկ հետո կգամ և իմ պանդոկում հանդիստ կքնեմ,
Որովհետև մեծ ճամփորդությունից հոգնել եմ սաստիկ:
Դե, շո՛ւտ չքացիր:
ԴՐՈՄԻՈ ՍԻՐ.— Շատ մարդ բառացի ձեզ կհասկանար
եվ նման գանձով շուտ կչքանար...

Գնում է:

ԱՆՏԻՖ ՍԻՐ.— Պարոն, սա պարկեշտ մի խեղկատակ է, որը
շատ հաճախ,—

Երբ ինձ թախծն է ճնշում կամ հոգսը,—
Թեթևացնում է իմ տրամուլյունը զվարթ կատակով:
Զե՞ք բարեհաճի ինձ հետ միասին քաղաքում շրջել,
Ապա պանդոկ գալ ու ինձ հետ ճաշել:

Ա. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Հրավիրել են ինձ մի քանի այլ վաճառա-
կաններ,

Որոնցից, պարոն, հույս ունեմ ես մեծ վաստակներ քաղել:
Խնդրեմ ինձ ներեք. թե ձեզ հարմար է,
Ես ժամը հինգին հրապարակում ձեզ կհանդիպեմ
Եվ կընկերակցեմ մինչ քնելաժամ:
Ինձ այժմ շտապ գործերս են կանչում:

ԱՆՏ. ՍԻՐ.— Մնացեք բարի մինչ այդ ժամանակ:

Գնամ թափառեմ և այս քաղաքը աչքի անցկացնեմ:
Ա. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Ես ձեզ մաղթում եմ հաճելի ժամանց:

Գնում է:

ԱՆՏԻՖ ՍԻՐ.— Ով մաղթում է ինձ հաճելի ժամանց
Մաղթում է մի բան, որ անգա՛րձ գնաց...

Աշխարհի համար ես նույնն եմ, ինչպես ջրի մի կաթիլ,
Որ օվկիանի մեջ որոնում է մի ուրիշ կաթիլի:
Եվ իր փնտրածը գտնելու համար այնտեղ ընկնելով
կորչում է անտես ու անհիշատակ:
Այդպես էլ ես եմ. մորս ու եղբորս գտնելու համար
նրանց փնտրելով, ես, տարաբախտս, ի՛նձ եմ կորցնում:

Մտնում է Դրոմիո եփեսոսցին:

Այստեղ է գալիս ահա ճշմարիտ իմ օրացույցը:
Դու ինչո՞ւ այդպես շուտ վերադարձար:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Շուտ վերադարձա՞մ, լավ է հարցնեք, ինչու
ուշացա:

Աբելոն այրվում է, խողը շամփուրից վայր է գլորվում,
Մեծ ժամացույցը դարկեց տասներկու,
Իսկ իմ տիրուհին՝ դեմքիս մի ապտակ:
Նա տաքացավ, որ ճաշը սատել է,
Իսկ ճաշն է սատել, որովհետև դուք չեք ուզում՝ տուն գալ.
Իսկ տուն չեք գալիս, որովհետև դուք ակորոժակ չունեք.
Ախրժակ չունեք, որովհետև ձեր ծոմը կոտրել եք,
Իսկ մենք պասին ու աղոթքին սովոր
Ձեր մեղքն ենք քափում ինքներս այսօր:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Վերջ տուր քո փութսին. խնդրում եմ, պարոն,
Ասա, ի՞նչ արիր դու այն փողերը, որ ես քեզ տվի:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Օ, այն վեց պեննին, որ չորեքշաբթի
Դուք ի՛նձ հանձնեցիք թամբագործին տալ,
Տիրուհուս վերցրած փոկի փոխարեն,
Թամբագործին եմ ես տվել, պարոն. այդ փողն ինձ մոտ չէ:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Տրամադիր չեմ այսօր կատակի:
Ասա ինձ, առանց շատախոսելու, ո՞ւր են փողերը.
Մենք այս քաղաքում օտարական ենք, ինչպե՞ս պատահեց,
Որ դու այդպիսի մի խոշոր գումար ձեռքից բաց թողիր:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Խնդրում եմ պարոն, երբ ճաշի նստեք, սկսեք
կատակելի:
Իմ տիկնոջ մոտից բռնեցի եկա այստեղ սրարշավ,
Եվ եթե առանց ձեզ վերադառնամ,

Ինքս կըշվեմ նույնքան սրարշա.
Ճակատիս վրա ձեր մեղքը գրված:
Իսկ իմ կարծիքով ձեր ստամոքսն էլ ստամոքսիս պես
Ձեզ համար պետք է ժամացույց լինի
եվ ձեզ տուն կոչի թռանց չրավերի:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բավ է, Դրոմիո, այդ կատակները այժմ տեղին
չեն,

Պահիր սրանից ավելի զվարթ ժամերի համար:
Ո՛ւր են ոսկիներն, որ ես քեզ տվի:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ի՞նչ, և ոչ մի ոսկի դուք ինձ չեք տվել:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բա՛վ է, սրիկա, քո գժուխանը վերջ տուր,
ասում եմ,

եվ ասա թե իմ հրամանը ինչպես կատարեցիր դու:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Եթ հրաման էր միայն ինձ տրված—
Այստեղ ձեզ փնտրել և տանել ճաշի, ձեր տունը— Ֆենիկս,
Ուր իմ տիրուհին և նրա քույրը սպասում են ձեզ:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Թե քրիստոնյա եմ, պատասխանիր ինձ,
Ո՛ւր ես պահ տվել դու իմ դրամը,
Թե չէ կփշրեմ այդ զվարթ դանդը,
Որն համառորեն կատակում է, երբ տրամադիր չեմ:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ես գլխիս վրա ձեզնից մի քանի մարկաներ¹⁾
ունեմ,

Իմ տիրուհուց էլ մի քանի մարկա ունեմ ուտերիս,
Նրանց գումարը չի կաղմում հազար:
Ձերդ ազնվություն, եթե ես դրանք ձեզ վերադարձնեմ,
Դուք համբերությամբ գուցե չվերցնեք:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Տիրուհուդ մարկա՞ն. այդ ի՞նչ տիրուհի ունես,
դու, ստրուկ:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ձեր կինը, պարոն, որ Ֆենիկսումն է, նա
տիրուհիս է,

Որ ծոմ է պահում և աղոթում է՝ շուտ տուն գաք ճաշի:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՛նչ, դեռ հանդգնու՞ ես դեմքիս ծիծաղել,
երբ արգելեցի ես քեզ այդ անհե՛ղի:
Թե որ այդպես է, առ քեզ, սրիկա:

¹⁾ Բառախաղ է, մարկա՝ նշան և դրամ.

Սեծում է նրան:

ՊՐՈՄ. ԵՓԵՍ.— Ի՞նչ եք անում, պարոն, ի սեր աստծո պահեք
ձեր ձեռքը,

Թե չէ կքաշեմ իմ կրունկները:

Փախչում է:

ԱՆՏԻՖ.— Կյանքովս եմ երգվում, ինչ որ հնարքով
Այս ճորտ սրիկան կողոպտված է իմ բոլոր փողերից:
Ասում են, որ այս քաղաքը լի է խաբեբայությամբ,—
Ձեռնածունքով, որոնք կապում են մարդկանց աչքերը,
Եվ կախարդներով, որ միտքն են փոխում,
Եվ լճուկներով, որ սպանում են,
Մարդկանց հոգին ու մարմինն ավերում:
Խաբեբաներով, որ ծպտված են,
Շաղակրատներով, որոնք խարդախ են,
Եվ շատ այսպիսի հանցագործներով:
Եթե այդ ճիշտ է, այստեղից պետք է արագ հեռանամ:
Դնամ «Կենտավրոս» ճորտիս փնտրելու,
Շատ եմ վախենում, որ իմ փողերը էլ ետ չեն դալու:

Գնում է:

ԱՐԱՐԱՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարան առաջին — Անտիֆոնոս եփեսոսացու տունը:

Մտնում են Աղբիանան և Լուսիանան:

ԱԴՐԻԱՆԱ.— Չվերադարձան ոչ ամուսինս և ոչ էլ ծառան,
Որին ես շտապ ուղարկեցի իր տիրոջ հտեկց:
Ժամը երկուան է, անշուշտ, Լուսիանա:

ՀՈՒՍԻԱՆԱ.— Հրավիրել է, թերևս, նրան մի վաճառական,
եվ նա շուկայից դիմել է այնտեղ ճաշելու համար:
Իմ բարի քույրիկ, եկ ճաշենք մենք էլ և չգայրանանք—
Տղամարդը իր ազատության մեջ իշխանավոր է,—
Իսկ ժամանակը տղամարդկանց վրա է իշխան,—
Երբ որ տեսնում են հարմար ժամանակ,
Նրանք մերթ զնում և մերթ գալիս են,
Ուստի համբերող եղիր, սիրելիս:

ԱԴՐԻԱՆԱ.— Իսկ ինչո՞ւ նրանց ազատությունը

Պետք է առավել լինի, քան մերը:

ՀՈՒՍԻԱՆԱ.— Որովհետև, քույր, նրանց գործերը դեռ տնից
դուրս են:

ԱԴՐԻԱՆԱ.— Սակայն երբ ես եմ նույն ձևով վարվում, նա
զայրանում է:

ՀՈՒՍԻԱՆԱ.— Իմացիր, որ նա սանձն է քո կամքի:

ԱԴՐԻԱՆԱ.— Էշերն են միայն այդպես սանձվում:

ՀՈՒՍԻԱՆԱ.— Անզուսպ ազատությունը մտրակվում է վշտով.

Ինչ որ ապրում է երկնի աչքի տակ,
Երկրի երեսին, ծովում, թե օդում՝ իր սահմանն ունի,
Գազանները, ձկները և թռչունները
Հպատակվում են իրենց ցեղակից արուններին միշտ:

Տղամարդն է նրանց պէտն աստվածային.

Անծայր աշխարհի և լայն ծովերի տիրակալն է նա,

Որը իր խելքով, հոգով ահագին

Շատ բարձր է կանգնած ձկնից ու հավքից,

Նա տեր է նաև իր կնոջ վրա, և իշխանավոր,

Ուստի քո կամքը պետք է նենթարկես դու նրա կամքին:

ԱԳՐԻԱՆԱ.— Այդ ճորտությունն է, որ թույլ չի տալիս քեզ ամուսնանալ:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Դա չէ պատճառը, այլ ամուսնական անկողնու հոգսը:

ԱԳՐԻԱՆԱ.— Եթե լինեիր դու ամուսնացած,

Կուգերիր քիչ էլ ինքնիշխան լինել:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Սիրելուց առաջ ես հնազանդվել կսովորեիր:

ԱԳՐԻԱՆԱ.— Իսկ ամուսինդ եթե սկսեր այլ տեղեր շրջել:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Կհամբերեիր մինչև նա տուն գար:

ԱԳՐԻԱՆԱ.— Քա՛ր համբերություն.

Նրա՛նք կարող են համբերող լինել, որ պատճառ չունեն:

Երբ որ լսում ենք աղետից ճնշված թշվառն է գոռում,

Մենք խրատում ենք, որ նա չգոռա,

Իսկ նույն տանջանքի բեռի տակ եթե ինքներս լինենք,

Նույնչափ, կամ գուցե առավել գոռանք:

Այդպես էլ դու ես. դեռ դաժան մարդուց չստացած մի վիշտ,

Ինձ քարոզում ես, որ լինեմ հլու և հնազանդ միշտ:

Բայց եթե ապրես և վրադ զգաս նույն տանջանքը դու,

Մի կողմ կնետես համբերությունը:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Լավ, մի օր դիտմամբ ամուսնանալով ես այդ կփորձեմ:

Բայց ահա ծառադ. քո ամուսինը այժմ հեռու չէ:

Մտնում է Դրոմիո եփեսոսցին:

ԱԳՐԻԱՆԱ.— Ասա՛, դանդաղու չարոնդ եկա՞վ:

ԴՐՈՄ. ԵՓԵՍՈՍ.— Ոչ, բայց նրա երկու ձեռքերի հետքը ինձ վրա է. իմ երկու քականջները կարող են վկայել այդ մասին:

ԱԳՐԻԱՆԱ.— Ասա, խոսեցի՞ր արդյոք նրա հետ,

Դիտե՛ս դու նրա մտադրությունը:

ԳՐՈՄ. ԵՓԵՍ.— Գիտե՛մ, գիտե՛մ... նա իր մտադրութիւնը ականջիս ասաց, անիծվի նրա ձեռքը, գրեթե ոչինչ չհասկացա ես:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Մի՞թե նա այնքան անորոշ խոսեց, որ չկարողացար նրան հասկանալ:

ԳՐՈՄ. ԵՓԵՍ.— Ոչ, նա այնքան որոշակի խոսեց, որ ես շատ լավ զգացի նրա հարվածները, միաժամանակ այնքան անորոշ՝ որ ես համարյա ոչինչ չհասկացա:

ԱԴՐԻԱՆԱ.— Բայց խոսա, ինչդեմ, գոյի՞ն է արդեն:

Կարծում եմ որ նա շատ է աշխատում ինձ հաճույանալ:

ԳՐՈՄ. ԵՓԵՍ.— Իսկ ես կարծում եմ, որ իմ պարոնը պարզապէս գիտէ:

ԱԴՐԻԱՆԱ.— Պողա՛վոր գի՛ժ է, ախ դո՛ւ, սրիկա:

ԳՐՈՄ. ԵՓԵՍ.— Ուզում եմ ասել կոտորա՛վոր չէ, սրպես

ամուսին,

Այլ պարզապէս գիժ:

Երբ ազաչեցի, որ տուն գա ճաշի,

Նա ինձնից հազար ոսկի պահանջեց:

Ասում եմ նրան. «Պարոն, ժամանակն է ճաշի զնալու»:

Պատասխանում է. «Ոսկիներս ո՛ւր են»:

Ասում եմ նրան. «Պարոն ճաշն այրվեց»:

Պատասխանում է. «Ոսկիներս ո՛ւր են»:

Ասում եմ նրան. «Գալո՛ւ ես թե ոչ»:

Պատասխանում է. «Ոսկիներս ո՛ւր են»:

Ո՛ւր է,— ասում է,— այն հազար մարկը,

Որ ես քեզ տվի, ով թշվառակա՛ն:

Ասում եմ նրան. «Պարոն, խոզն այրվեց»:

Պատասխանում է. «Ոսկիներս ո՛ւր են»:

Ասում եմ նրան. «Պարոն, տիրուհիս»:

Պատասխանում է. «Կախվի տիրուհիդ,

Ո՛վ է տիրուհիդ, գրողը տանի քս ալի՞ տիրուհուն»:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ո՛վ այդպէս ասաց:

ԳՐՈՄ. ԵՓԵՍ.— Պարոնն ասաց:

«Ես չեմ ճանաչում,— պատասխանում է,—

Ոչ տուն, ոչ կնիկ, և ոչ տիրուհի»:

Այնպէս որ ես իմ հանձն առած գործը,—

Որը իմ լեզվիս պարտքն էր կատարել,—

Նրա շնորհիվ ես տուն եմ բերել ուսերիս դրած,

Որովհետեւ նա եզրափակելիս ուսերս ծեծեց:

ԱԴՐԻԱՆԱ.— Ետ դարձիր, ստրուկ, և տուն բեր նրան:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Գնա՛ւ և կրկին ծեծվելով դառնա՛ւ:

Ի սեր աստծո, այժմ ուրիշին այնտեղ ուղարկեք:

ԱԴՐԻԱՆԱ.— Ետ գնա, ստրուկ, թե չէ կիշրեմ զանգղ խաշաճե:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Իսկ նա կսկսի այդ խաշը օրհնել նոր

հարվածներով,

Մեջտեղի գլուխս պիտի սրբանա:

ԱԴՐԻԱՆԱ.— Չքվիր, ասում եմ, շատախոս ումիկ, պարոնիդ

տուն բեր:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Մի՞թե ձեզ համար այնքան կլոթ եմ,

Որ դուք կարող եք ինձ ֆուտբոլի պես նետել դես ու դեն:

Դուք այնտեղ նետեք, նա այստեղ նետի.

Եթե ես այսպես երկար ծառայեմ,

Ինձ վրա պետք է կաշի հագցնեք:

Գնում է:

ԱՌԻՍԻԱՆԱ.— Չհամբերելը, տես, թե ինչպե՛ս է դեմքդ աշլալել:

ԱԴՐԻԱՆԱ.— Նա անշուշտ այնտեղ գվարճանում է սիրուհիներով,

Մինչդեռ ես տանը հյուծվում եմ մի վառ հայացքի կարոտ:

Մի՞թե տարիներն սրբեցին չքնաղ գեղեցկությունը

Իմ խեղճ այտերից:

Եթե այդպես է, նա՛ վատնեց նրան:

Խոսքերս են անդուր, միտքս է բթացել:

Անգլիությունը կարծր մարմարից

Ափիի խոր է բթացնում սուր ու հրաշունչ լեզուն:

Եվ մի՞թե նրանց փայլուն զարդերը գերում են նրան.

Այդ իմ մեղքը չէ, նա՛ է իմ տերը:

Ինչ ավերակ էլ նա իմ մեջ տեսնի,

Նա՛ է կատարել: Իմ տգեղության պատճառը նա՛ է.

Պեղեցկությունս կրկին կշողա,

Եթե ինձ վրա մի արեալին հայացք նետի նա:

Սակայն վայրենի կոնիկի նման

Բակից փախչելով արածում է դուրս,

Իսկ ես, դժբախտս, գրոշ էլ չարժեմ:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Օ՛, խա՛նդ ինքնավեր. թո՛ւհ, վաճի՛ր նրան:
ԱԴՐԻԱՆԱ.— Հիմարը միայն կարող է տանել նման անարգանք,
 Գիտեմ, այլ վայր է նրա աչքերին այժմ դուր գալիս,
 Դրա համար էլ նա տուն չի գալիս:
 Նա խոստացավ ինձ շղթա նվիրել:
 Նրանի թե նա իր այդ խոստումը թողներ անկատար,
 Բայց հավատարիմ իր թմուռնական անկողնին մնար:
 Տեսնում եմ, քարն էլ ամենաանգին
 Իր փայլն է կորցնում. և թեպետ ոսկին
 Շատ դիմացկուն է շփման նկատմամբ,
 Սաստիկ շփումից սկսում է մաշվել:
 Այդպես էլ ահա կեղծիք, նեխություն
 Ապականում են՝ անվանի մարդուն:
 Գեղեցկությունս եթե չի կարող էլ նրան դուր գալ,
 Ես արցունքներով իր բեկորները կոշնչացնեմ,
 Եվ լացով կմեռնեմ:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Որքա՛ն սիրահար խելագարներ կան զիժ խանդին
 գերի:

Գնում է:

Տեսարան երկրորդ. Հրապարակ:

Մտնում է Անտիֆոլոս սիրակուզացին:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դրոմիոյին հանձնածս ոսկին ապահով
 Պառկած է «Կենտավրոս», իսկ հավատարիմ
 Իմ ծառան ընկած ինձ է որոնում:
 Իմ հաշվով, և ըստ իմ հյուրընկալի տված ղեկուցման,
 Դրոմիոյի հետ ես չեմ հանդիպել այն պահից ի վեր,
 Նրբ ուղարկեցի նրան շուկայից:
 Տեսեք, նա ուղիղ այստեղ է գալիս:

Մտնում է Դրոմիո սիրակուզացին:

Ի՛նչպես ես, պարոն. քո հոգու ղվարթ վիճակը փոխվե՛ց:
 Թե սիրում ես ծեծվել, կատակիր նորից:

«Կենտավրը» չգիտե՞ս, ոսկին չստացա՞ր:

Քո տիրուհին քեզ ուղարկեց, որ ինձ տուն տանես ճաշի՞:

Տունս ֆենիկսում էր: Դու գժվե՞լ էիր,

Որ խենթի պես էիր ինձ պատասխանում:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ի՞նչ պատասխան, տեր, և ե՞րբ եմ նման բաներ
ես խոսել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Հենց այժմ, այստեղ, մի կես ժամ առաջ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ես ձեզ չեմ տեսել այն պահից ի վեր,

Երբ ոսկի տալով ինձ ուղարկեցիր այստեղից «Կենտավր».

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դու փուչ արարած, ժխտեցիր որ քեզ ոսկի եմ
տվել,

Եվ խոսում էիր ինչ որ տիրուհու և ճաշի մասին,

Որի համար էլ, հույս ունեմ, ես քեզ զգացնել տվի,

Որ քո ասածը դուր չեկավ սրտիս:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ուրախ եմ տեսնել ձեզ այդպես զվարթ,

Բայց ասեք խնդրեմ, ինչո՞ւ համար է ձեր այդ կատակը:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ինչպե՞ս, դու նորի՞ց ինձ ձեռք ես առնում,

Դու ծիծաղում ես նորից երեսի՞ս,

Կարծում ես քեզ հետ կատա՞կ եմ անում:

Առ քեզ այս մեկը, այս մյուսն էլ առ:

Մեծում է նրան:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ի սեր ասածո, վե՛րջ տվեք, պարոն,

Ձեր կատակն արդեն սաստիկ լրջացավ,

Ինչո՞ւ համար եք ինձ այդպես ծեծում:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որովհետեւ, երբ քեզ համարելով իմ խեղկատակը:

Երբեմն քեզ հետ զրույց եմ անում ես մտերմաբար,

Դու սկսում ես աներեսաբար ծաղրել իմ սերը

Եվ գոհկացնել իմ լուրջ պահերը:

Երբ արևն է շողում, գիժ մժղուկները թող ելնեն պարի,

Երբ թաքցնում է նա իր շողերը՝ թող ճեղքեր մտնեն:

Եթե ուզում ես ինձ հետ կատակել՝ իմ դեմքին նայիր,

Եվ քո խոսքերը իմ նայվածքներին համաձայնեցրու,

Թե չէ՝ ձեռքերով ես այս մեթոդը գանգո կմտցնեմ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Դուք գա՞նգ եք ասում, ես կուզեի որ նա պարզա-

պէս գլուխ լինեմ, միայն թե դուք վերջ տայիք ձեր հարվածներին: Իսկ եթե շարունակեք երկար հարվածներ տեղալ, ապա ես պետք է գլխիս համար մի գանգ որոնեմ և ավելի ամրացնեմ լայն, հակառակ դեպքում իմ ուղեղը տեսերիս մեջ եմ փնտրելու: Բայց խնդրեմ, ասացեք, պարոն ինչո՞ւ եմ ծեծվում:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Մի՞թե չգիտես:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչինչ չգիտեմ, բացի ծեծվելուց:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ուզո՞ւմ ես ասեմ թե ինչու:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այո, ինչու և ինչու համար, որովհետեւ բոլորն ասում են, թե Պամեն ինչուն ունի մի ինչու համար:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ահա թե ինչու... նախ որովհետեւ դու ինձ ծաղրեցիր. և հետո, որովհետեւ դու նույնը կրկնեցիր:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Եղե՞լ է մի մարդ, անտեղի ծեծվի զուր տեղը
այսչափ,

Ձեր ինչուններում ոչ միտք կա, ոչ չափ:

Շնորհակալ եմ ձեզանից, պարոն:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Շնորհակա՞լ ես, ի՞նչ բանի համար:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նրա համար, որ դուք ինձ վարձատրեցիր ոչնչի համար:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ես այդ սխալը հաջորդ անգամ կուղղեմ և քեզնից կվերցնեմ մի բան առանց քեզ ոչինչ տալու, բայց, ասա, պարոն, ճաշի ժամանակ չէ՞:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, պարոն, կարծում եմ միսը իմ ստացածի կարիքն է զգում:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ ես ուզում ասել:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նա լավ ծեծված չէ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Նշանակում է՞ չոր է լինելու:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Եթե չոր լինի, պարոն, խնդրում եմ հրաժարվեք այն ուտելուց:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ձեր պատճա՞ռը:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Որպեսզի նա ձեզ չզայրացնե և երկրորդ անգամ դուք ինձ չծեծեք:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Պարոն, սովորիր տեղին կատակել. ամեն ինչ իր ժամանակն ունի:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ես չէի համարձակում ժխտել այդ, նախքան իմ անխղճաբար ծեծվելը:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ըստ ի՞նչ փաստարկության:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ըստ Հայր Ժամանակի ճաղատ գանգի պես պարզ մի փաստարկության:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Լսենք այդ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այն մարդը, որ բնության կամքով է ճաղատանում, նրա գլխին էլ ոչ մի ժամանակ մազեր չեն բուսնում:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Մի՞թե ոչ մի միջոց չկա կորած մազերը վերադարձնելու:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Կա. կեղծամ դնելով և կորած մազերը փոխարինելով ուրիշ մազերով:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բայց ինչո՞ւ ժամանակն իսկիցն իսկ է մազերի արտադրման հարցում, երբ առհասարակ նա շատ առատաձեռն է:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Որովհետև բարեբախտություն է, որ նա կենդանիներին առատ մազեր է շնորհել, իսկ մարդկանցից խլած մազերի չափով ժամանակը նրանց խելք է տալիս:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բայց կան շատ մարդիկ, որոնք ավելի շատ մազեր ունեն, քան թե խելք:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Բայց չկա մի մարդ, որ խելք ունենար իր մազերը չկորցնելու:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Հենց նոր ասացիր, որ մազավոր մարդիկ ամենից հիմարներն են:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Որքան մարդը հիմար է, այնքան շուտ է կորցնում իր մազերը և այն էլ մի տեսակ ուրախությամբ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Իսկ ի՞նչ պատճառով:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Երկու չափազանց հիմնավոր պատճառներով:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Խնդրեմ դրանք հիմնավոր չկոչել:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այդ դեպքում ստույգ պատճառներով:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ոչ էլ ստույգ, քանի որ խոսքը կեղծ նյութի մասին է:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այդ դեպքում ասենք որոշ պատճառներով:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ասա պատճառները:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Առաջին, որ նա խնայում է այն փողը, որ պետք

է ծախսել մազերի խնամքի վրա, երկրորդ, որ չի վախենում թե ճաշի ժամանակ մազերը կթափվեն իր ապուրի մեջ:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դու այս ամբողջ ժամանակ փորձում էիր ապացուցել, որ ամեն ինչ իր ժամանակը չունի:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— Եվ ապացուցեցի, պարոն. այսինքն բնության կամքով թափած մազերի վերադարձի համար ժամանակ գոյություն չունի:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բայց դու չես բերում հիմնավոր փաստեր, թե ինչու մազերի վերադարձի համար ժամանակ գոյություն չունի:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ես այսպես եմ հիմնավորում այդ. ինքը ժամանակը ճաշատ է, ուստի և ուզում է, որ մինչև աշխարհի վերջը իրեն հետևողները ճաշատ լինեն:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ես գիտեի, որ քո եզրակացությունն էլ ճաշատ կլիներ:

Բայց սո՛ւս, այն ո՞վ է մեզ նշան տալիս:

Մտնում են Ադրիանան և Լուսիանան:

ԱԴՐԻԱՆԱ.— Ինչու չէ, օտար տեսք տուր՝ քո դեմքին, եվ խոժոռ նայիր, դու Անտիֆոնս:
 Քնքուշ նայվածքդ ուրիշ կնոջ ես այժմ պարզեում.
 Ես Ադրիանան չեմ, ոչ էլ քո կինն եմ:
 Կար մի ժամանակ, որ սիրահոժար ինձ երգվում էիր, Թե քո ականջի համար ոչ մի բառ քաղցր չի հնչում, Թե քո աչքերի համար տհաճ է ամեն առարկա, Թե ձեռքիդ համար անդուր է ամեն տեսակի հպում, Բոլոր տեսակի կերակուրները անհամ են թվում, Երբ ես չեմ խոսում, կամ քեզ չեմ նայում, Կամ քեզ չեմ հպվում, կամ քեզ հետ ճաշում:
 Այդ ինչպե՞ս եղավ, իմ ամուսինս, օ՛, ինչպե՞ս եղավ, Որ քեզ ուրացար,
 Ես քե՛զ եմ ասում, քանզի ինձ համար արդեն օտար ես, Ի՛նձ, որ անբաժան և միասնական
 Քո մարմնից էլ թանկ, քո մասն էր դարձած:
 Օ, մի անշատիր դու քեզ ինձանից.
 Իմացիր, սեր իմ, ավելի հեշտ է

Ջրի մի կաթիլ ջրվեժում կորցնել և նորից դանել
 Առանց խառնուրդի և փոփոխութեան,
 Քան պոկվել, առանց ինձ էլ տանելու:
 Քեզ խիստ անպատված պիտի զգայիր,
 Եթե լսեիր, որ անառակ եմ,
 Որ այս մարմինը, որ քեզ է նվիրված,
 Ապականված է լպիրշ տոփանքով,
 Դու չէի՞ր թրի արդյոք երեսիս, չէի՞ր վռնդի,
 Եվ կոռչ համար կեղտոտ անունը
 Չէ՞իր շարտի արդյոք իմ դեմքին:
 Մեղսապարտ մաշկս դու չէի՞ր պոկի
 Իմ պոռնկալին ճակատից, ասա,
 Եվ իմ պսակի մատանին իմ կեղծ մատից հանելով
 Չէի՞ր փշրի այն ապահարզանի ահալոր ուխտով:
 Գիտեմ, կանեի՞ր: Արա՛, ուրեմն:
 Ապականված եմ ևս խարդախ սիրով:
 Արյունս պղծվեց անառակութեան ոճրագործութեամբ,
 Որովհետեւ, երբ ևս և դու մե՛կ ենք, իսկ դու խարդախ ևս,
 Նշանակում է քո մերձեցումով
 Ես իմ արյան մեջ ընդունում եմ քո մարմնի վարակը:
 Հարգիր մահիճդ դու օրինավոր,
 Ես կլինեմ անբիծ, դու էլ՝ պատվավոր:
 ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Եվ այդ բոլորը դուք ի՞նձ եք ասում, զեղեցիկ
 տիկին.

Ես ամենևին ձեզ չեմ ճանաչում:
 Երկու ժամ առաջ Եփեսոս եկա,
 Եվ այս քաղաքը ինձ համար նույնքան օտարոտի է,
 Որքան ձեր ամբողջ խոսակցությունը:
 Մտքումս ամեն բառ շուտ ու մոտ տվի,
 Բայց ձեր ստածից բա՛ն չհասկացա:
 ԱՌԻՍԻԱՆԱ.— Ա՛հ, եղբայր, մի՞թե մեզ չես ճանաչում.
 Ոչ մի ժամանակ այդպես չես վարվել դու իմ քրոջ հետ:
 Նա Դրոմիոյին ուղարկեց, որ քեզ տուն կանչի ճաշի:
 ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դրոմիոյի՞ն:
 ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ի՞նձ:
 ԱԴՐԻԱՆԱ.— Այո, քե՛զ, և դու վերադառնալով

Ասացիր, որ նա քեզ մի լավ ծեծեց և ծեծելիս էլ
ժխտել է, որ իմ տունը իր տունն է, իսկ ես՝ իր կինը:
ԱՆՏԻՏ. ՍԻՐ.— Ուրեմն, պարոն, արդեն խոսե՛լ ես դու այս
տիկնոջ հետ:

Ի՞նչ իմաստ և ինչ նպատակ ուներ ձեր հանդիպումը:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ե՛ս:

Նրան տեսնում եմ առաջին անգամ:
ԱՆՏԻՏ. ՍԻՐ.— Ստում ես, սրիկա, որովհետև դու նրա խոսքերը
հրապարակում ինձ հաղորդեցիր:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Երբեք սրա հետ չեմ խոսել կյանքում:

ԱՆՏԻՏ. ՍԻՐ.— Ինչպե՞ս կարող էր, ուրեմն, նա մեզ անունով
կոչել,

Ներշնչմամբ, գուցե:

ԱԴՐԻԱՆԱ.— Մի՞թե վայել է ձեզ պես լրջամիտ մի մարդու
համար

Ձեր ծառայի հետ խաղալ այդպիսի գոհհիլ մի խաղ,
Քաջալերելով, որ նա ավելի բորբոքե վիշտս:

Ես առանց այդ էլ դժբախտացած եմ, որ ինձ ձգել ես,
Արհամարհանքով մի՛ ավելացրու դու տանջանքներս:

Դնանք, ես այսպես ամուր կկաշեմ քո թևից ընդհուպ,
Դու սոսի եղիր, իմ ամուսինը, ես՝ խաղողի թուփ:

Իմ թուլությունը քո հզորության շուրջ փաթաթելով
Ես կգորանամ քո զորությունով:

Ինձնից անջատել կարող է միայն քեզ սեզը վայրի,
Շորթող բաղեղը, փշոտ տատասկը, մամուռն անբերրի:

Եթե չպոկես, նրանք քո հյուսիս պիտի վարակեն,
Քո կործանումով՝ ճյուղեր արձակեն:

ԱՆՏԻՏ. ՍԻՐ.— Եվ այդ բոլո՞րը նա ինձ է ասում,
Նա ի՞նձ է կարծում իր սիրո նյութը:

Ձե՛մ ամուսնացել ես այս կնոջ հետ արդյոք երազում,
Կամ թե ննջում եմ և այս բոլորը քնած եմ լսում:

Այս ի՞նչ սխալ է մեր ականջներն ու աչքերը շեղում:
Այս առեղծվածը մինչև որ պարզեմ,

Եկ այս պատրանքին ես սիրով փարվեմ:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Դրոմիո՛, ասա թող սեղան պատրաստեն:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Բայց, օ՛, որտեղ է իմ տերողորմյան:

Մեղավորի պես խաչակնքում եմ.

Սա կախարդական աշխարհն է, անշուշտ. օ՛, ձախորդութիւն,
Մենք զրուցում ենք շար ողիւնների, ուրվականների,

Պարիկների հետ:

Եվ եթե նրանց չհպատակվենք,

Նրանք մեր շունչը մեզնից կծծեն,

Կամ կապտելու չափ մեզ կճանկռտան:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ի՞նչ ես քեզ ու քեզ այդպես քրթմնջում,

պատասխան տուր ինձ,

Դու ծուլ, դու խիտունջ, դու բուլ Դրոմիո:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ես բոլորովին այլափոխվել եմ, այդպես չէ՞,

պարոն:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Կարծում եմ, որ դու հոգով ես փոխվել այդպես
էլ և ես:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, պարոն, ես թե հոգով եմ փոխվել և թե

մարմնապես:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Բայց արտաքինով դու նույնն ես դարձյալ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, ես նման եմ այժմ կապիկի:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Եթե դարձել ես դու մի ինչ որ բան,

Ապա դու էջ ես դարձել անպայման:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այդ ճշմարիտ է. նա ինձ է հեծել,

Եվ փափազում եմ ես խոտ արածել:

Այո, ես էջ եմ, թե չէ, չէր կարող,

Որ ես նրան լավ չճանաչեի, ինչպես որ նա ինձ:

ԱԴՐԻԱՆԱ.— Էլ բավական է, չեմ ուզում այլևս ես լինել հիմար,

Մատներս դնել աչքիս մեջ ու լալ,

Մինչ տերն ու ծառան ծիծաղում են իմ վշտերի վրա:

Ճաշի գնանք, պարոն: Իսկ դու, Դրոմիո, դարպասին հսկիր:

Իմ ամուսինս, այսօր վերևում քեզ հետ պիտ ճաշեմ,

Եվ հազարավոր քո գաղտնիքները սրտիցդ քաշեմ:

Մանչ, քո պարոնին թե հարցնող լինի,

Ասա ճաշում է. թույլ չտաս ոչ ոք ներս մտնի այստեղ.

Գնանք քույրիկ իմ, իսկ դու, Դրոմիո, պաշտոնդ լավ խաղա:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Երկրի՞ վրա եմ, երկնքո՞ւմ արդյոք, թե՞ դժոխքի
մեջ,

Քնա՞ծ, թե արթո՞ւն, դի՞ժ, թե՞ ողջամիտ,

Սրանց հայտնի եմ, ինձ համար անհայտ:

Եկ ամեն խոսքին համամիտ սրանց

Համարձակ նետվեմ այս մշուշի մեջ արկածից արկած:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Պարոն, դարպասին ե՞ս եմ հսկելու:

ԱԴՐԻԱՆԱ.— Այո, և եթե մարդ ես ներս թողել՝ դանդաղ եմ
փշրելու:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Եկ, Անտիֆոնոս, շատ ուշ ենք ճաշում:

Գնում են:

ՍՐԱՐԱՅՈՒՆ ԵՐՐՈՐԻ

Տեսաւան սուսփն— Հրապարակ:

Ստնում են Անտիֆոլոս Եփեսոսցին, Դրոմիո Էփեսոսցին, Ան-
ջելոն և Բալտազարը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Սինյոր Անջելո, մեզ արդարացրեք.
Կինս կովում է, երբ ժամանակին ևս տուն չեմ դառնում:
Ասացեք նրան, որ ևս ուշացա խանութում նստած,
Դիտելով ինչպես դուք նրա համար շվիս եք շինում,
եվ վաղն այդ շվիսն տուն եք բերելու:
Իսկ այս սրիկան ստում է երեսիս,
Հալատացնելով, որ ինձ տեսել է հրապարակում,
եվ ևս, իբր թե, ծեծել եմ նրան և պահանջել եմ
Հաղար մարկ ոսկով:

Որ սրացել եմ իմ կինն ու տունը:
Դե խոսիր, հարբած, ի՞նչ ևս կամեցել դրանով ասել:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ինչ կուզեք՝ ասեք,
Բայց ևս զիտեմ այն, ինչ որ ևս զիտեմ.
Որ ինձ ծեծեցիք հրապարակում,
Այդ կապացուցեմ ձեր հարվածների թողած հետքերով:
Եթե իմ կաշին մազադաթ լինեք,
Ձեր հարվածները լինեին թանաք,
Ձեր ձեռագիրը կհամողեք ձեզ,
Թե ինչ եմ ասում:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Իսկ ևս ասում եմ՝ դու ավանակ ես:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Այո, այդպես է. այդ երևում է այն հիշողներից,
Որ ևս լսում եմ,
Այն հարվածներից, որ ևս կրում եմ:
Քացու դեմ քացի ձեզ պետք է տայի,

Որ իմ սմբակից հեռու մնայիք,
Եվ ինձ պես էշից միշտ վախենայիք:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ձեզ տխուր եմ տեսնում, սինյոր Բալտազար:

Տա աստված, որ մեր այսօրվա ճաշը
Ներդաշնակ լինի ձեր բարի գալուն
Եվ իմ սիրալիր ընդունելության:
ԲԱԼՏԱԶԱՐ.— Ձեր ճաշից թանկ է ինձ ձեր ողջունը:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Օ՛, ինչ եք ասում, սինյոր Բալտազար,

Մանավանդ, երբ որ միս կամ ձուկը կա,
Մի աման ճաշը թանկ է անողայման,
Քան ջերմ ողջունով լցված մի սեղան:
ԲԱԼՏԱԶԱՐ.— Լավ ճաշը, պարոն, հասարակ բան է,

Որ ամեն՝ ռամիկ ձեզ կմատուցե:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Իսկ ջերմ ողջունը ավելի առատ,
Որովհետեւ նա խոսք է հասարակ:

ԲԱԼՏԱԶԱՐ.— Այն ճաշն է ուրախ, ուր պակաս հացը
Սրտանց է տրվում:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Այդ լավ է միայն, երբ տերը՝ ժլատ,
Իսկ հյուրն ուտելու ակոորժակ չունի:
Թեպետ իմ ճաշը համեստ կլինի,
Բայց ներող եղեք,
Ուրիշների մոտ լավ ճաշ կգտնեք,
Բայց ոչ սրտագին՝ ընդունելության:
Սակայն համբերեք, իմ դուռը փակ է:
Ասա թող բանան:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Մո՛ղ, Բրիգիտ, Մարիա՛ն, Սեսիլիա՛,
Ջուլիանա՛, Ջենի՛:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Դիժ, քոթուկ, որձակ, անզգա, ապուշ, անբան,
Հեռացիր կամ թե շնթուկի դռան:
Ինչքան կնիկ է հավաքել, մի տես,
Երբ մեկն էլ շատ է. չքվի՛ր, աներես:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ինչքան բթացել է մեր այս դռնապան:

Բաց արա դուռը, պարոնս է դռան:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Թող դռնա այնտեղ, որտեղից եկավ,

Թե չի ոտորկերը կարող են մրսել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Այդ ո՞վ է խոսում, բա՛ց արա՛ դուռը:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Ես ձեզ կասեմ երբ, երբ ասեք ինչու:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ինչո՞ւ: Ճաշելու: Ես դեռ չեմ ճաշել:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Նվ չեք էլ ճաշի. եկեք ուրիշ օր:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դու ո՞վ ես, որ իմ սեփական դուռը փակում
ես իմ դեմ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից) Ես Դրոմիոն եմ,

Այս դռանն այսօր ես եմ դռնասպա՛ն:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Օ, դու սրիկա, հափշտակել ես թե իմ պաշտոնը
նվ թե անունս.

Մեկը ինձ ոչ մի վաստակ չտվեց,

Մյուսը միայն թուր ու մուր բերեց:

Թե իմ փոխարեն այսօր լինեիր,

Քո կերպարանքը մի անունի հետ,

Իսկ քո անունը մի իշուկի հետ պիտի փոխեիր:

ԼՈՒՍԻ.— (Ներսից)

Այդ ի՞նչ աղմուկ է այնտեղ, Դրոմիո, ովքե՞ր են դռան:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Նե՛րս թող պարոնիս:

ԼՈՒՍԻ.— (Ներսից)

Ոչ, ներս չեմ թողնի, շատ ուշ է գալիս,

Այդպես էլ ասա դու քո պարոնին:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Օ, աստվա՛ծ, որքան ծիծաղելի է.

Հիշիր առածը. վերցնե՛մ մահակը:

ԼՈՒՍԻ.— (Ներսից)

Դու երկրորդն հիշիր, ե՛րբ ես վերցնելու, կարո՞ղ ես ասել:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Լուսի, եթե քեզ Լուսի են կոչում,

Դու նրան շատ լավ պատասխանեցիր:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Սիրունիկ Լուսի, հուսով եմ, որ դու մեզ ներս
կթողնես:

ԼՈՒՍԻ.— (Ներսից)

Կարծեմ այդ մասին ես ձեզ խնդրեցի:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Նվ դուր մերժեցիր:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Հրաշալի է, հարվածն հարվածի վրա է գալիս:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ինչ ներս թող, հիմար:
ԼՈՒՍԻ.— Իսկ ինչո՞ւ համար:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Տեր իմ, դուռն ամուր ծեծեք:

ԼՈՒՍԻ.— (Ներսից) Թող ծեծեն, մինչև ցավ զգաս:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Երբ դուռը ջարդեմ, իմ հարվածներից ինքդ
ցավ կզգաս:

ԼՈՒՍԻ.— (Ներսից)

Փուլթ չէ, քաղաքում կարծես բանտ չկա:

ԱԴՐԻԱՆԱ.— (Ներսից)

Ով է դռանը այդպես աղմկում:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Ուր որ նայում ես, քաղաքը լի է ստահակներով:

ԱՆՏԻՖ.— ԵՓԵՍ.— Այդտե՞ղ ես, կինս. ինչո՞ւ ուշացար:

ԱԴՐԻԱՆԱ.— (Ներսից)

Կի՞նդ, սրիկա. կորի՛ր մեր դռնից:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Թե վշտացած եր ,«սրիկան», տեր իմ,

Արդեն կատարյալ անպատվությունն է:

ԱՆՋԵԼՈ.— Այստեղ չգտանք մենք ոչ համեղ ճաշ, ոչ էլ ջերմ
խոսքեր,

Բայց կուզենայինք երկուսն էլ լինեք:

ԲԱԼՏԱՋԱՐ.— Եթե մենք քննենք թե այդ երկուսից որն է
ցանկալին,

Կգնանք իսկույն, չհանդիպելով այստեղ ոչ մեկին:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Տեր իմ, հյուրերը կանգնած են դռան, թույլ
տվեք ներս գան:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Օգու՛մ մի բան՝ կա, որ թույլ չի տալիս մեզ
ներս մտնելու:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Այդպես՝ կասեիր, թե բարակ շորեր լինե՛ր ձեր
հագին:

Ձեզ համար ներսում տաք ճաշ է դրված,

Իսկ դուք մրսում եք դռանը կանգնած:

Ոչ միայն մարդը, այլև դրանից քարայծն է գժվում:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Գնա մի բան՝ բեր ես դուռը ջարդեմ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից) Ջարդեք ինչ որ կա, իսկ ես կջարդեմ
գանգդ, սրիկա:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Քեզ հետ կարող եմ ես խոսքեր ջարդել. բայց
խոսքերն են սին,

Կուղեմ հարվածել ոչ թե թիկունքից, այլ քա երեսին:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Ինչպես երևում է, ջարդվել ես ուզում. կորի՛ր, անասուն:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— «Կորիր անասուն». արդեն չափն անցավ.
խնդրեմ ներս թող մեզ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— (Ներսից)

Այո, երբ գտնեք ծառ առանց ճյուղի, գազան անմորթի:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ուրիշ ճար չկա, դուռը կջարդեմ. դնա՛ գերան
բեր:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ծառ առանց ճյուղի, դուք ա՛յդ եք ուզում.

Թեև անմորթի գազան չգտանք,

Բայց առանց ճյուղի մենք ծառը գտանք.

Երբ որ գերանով դուռը կջարդենք,

Եվ երբ քեզանից կաշիդ կքերվենք,

Նոր առանց մորթու գազան կգտնենք:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Գտիր ինձ համար երկաթե գերան:

ԲԱԼՏԱԶԱՐ.— Համբերեք, պարոն, այդ բանը չանեք.

Դրանով միայն դուք ձեր խնունը ոտնատակ կանեք,

Ձեր կնոջ անբիծ պատիվն հանձնելով

Մեծ կասկածանքի. բացի դրանից,

Ձեր երկարատև փորձով դուք զիտեք,

Որ նրա խելքն ու անարատ հոգին,

Նրա տարիքն ու համեստությունը

Պաշտպան են նրան, և ցույց են տալիս,

Որ այստեղ ինչ որ ուրիշ պատճառ կա, որ անհայտ է ձեզ:

Անկասկած, պարոն, նա կարդարանա,

Թե ինչու այժմ սեփական տունը փակեց ձեր առաջ:

Խորհուրդս լսեք. հեռանա՛ք հանգիստ

Եվ ճաշենք «Վաղրում»:

Իսկ երեկոյան մենակ տուն եկեք,

Իմանալու թե ո՞րն է պատճառը այս արտաքսման:

Իսկ եթե հիմա, օրը ցերեկով, դուք դուռը ջարդեք,

Բամբասանքների մեծ տեղիք կտաք.

Անբիծ անունը ձեր կսեպնեք՝

Գռհիկ ամբոխի շարախոսությունը,

Որ կապրի անգամ ձեր շիրիմներին, երբ դուք մեռած եք:
Զրպարտությունը, քանզի ապրում է բերանից բերան,
Ուր որ բուն դրեց, տե՛ր է հավիտյան:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ինձ համոզեցիք. խաղաղ կգնամ,
Եվ, թեկուզ ծանր է, կաշխատեմ սակայն ինձ ուրախ ցույց
տալ:

Լեզվով աննման մի աղջիկ գիտեմ,
Սիրուն, սրամիտ, վայրի և քնքուշ:
Նրա մոտ կճաշենք. այդ աղջկա համար,
Կինս,— երգվում եմ, առանց պատճառի,—
Ինձ հետ շատ հաճախ կովում է տանը:
Կճաշենք նրա մոտ:

Անջելոյին:

Դուք գնացեք տուն
Եվ բերեք շղթան՝ անշուշտ պատրաստ է.
Այնտե՛ղ է տունը: Այդ շղթան, այսօր,
Իմ կնոջ մաղձը շարժելու համար,
Ես կնվիրեմ հյուրընկալուհու: Շտապե՛ք, պարոն,
Այնքան, որքան իմ սեփական դուռը փակվել է իմ դեմ,
Մի այլ դուռ ձեռնեմ, գուցե բաց անեն:
ԱՆՋԵԼՈ.— Մի ժամից հետո ես այնտեղ կգամ:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես ձեզ կսպասեմ: Գիտեմ կատակն այս
Բաղական թանկ է նստելու վրաս:

Գնում եմ:

Տեսարան երկրորդ— Նույն վայրը:

Մտնում են Լուսիանան և Անտիֆոնոս սիրակուզացիին:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Մի՞թե կարելի է իսպառ մոռանալ
Ձեր ամուսնական պարտքն, Անտիֆոնոս:
Հնարավո՞ր է, որ սիրո գարնան
Ձեր սիրո բողբոջը այդպես թառամի,

Որ սիրո շենքը ավերակ դառնա դեռ չբարձրացած:
Թե իմ քրոջ հետ դուք ամուսնացաք ոսկուց շլացած,
Հանուն այդ ոսկու՝ իր հետ վարվեցեք առավել քնքուշ.
Իսկ թե սիրում եք այժմ ուրիշին, սիրեցեք ծածուկ,
Եվ ձեր կեղծ սերը կուրոթյան քողով փաթաթեցեք դուք,
Որ չկարողանա քույրս այն կարդալ ձեր դեմքի վրա:
Լեզուդ չդառնալ թող նախատինքիդ համար հռետոր:
Միշտ քնքուշ տեսքով և քաղցր խոսքով նրան հանդիպեք,
Եղեք ուխտագրութ. մոլութիւնը պճնեք
Ինչպես սուրհանդակ առաքինութեան.
Անմեղ տեսք առեք, թեկուզ ձեր սիրտը լինի կեղտի ծով.
Ձեր մեղքը ծածկեք սրբութեան փայլով.
Խաբեբա եղեք միայն գաղտնաբար.
Եվ ինչո՞ւ պետք է նա այդ իմանա.
Ո՞ր հիմար գողն է, որ պարծենում է գործած հանցանքով:
Դուք մեղավոր եք կրկնակի անգամ.
Ձեր ամուսնական մահիճն եք պղծել,
Եվ թույլ եք տվել, որ քույրս կարդա այն ձեր աչքերում:
Կեղտն ալօրինի՝ պատիվ է դառնում, Դերը լավ ծածկվում է,
Վատ արարքները կրկնապատիկ են դառնում վատ խոսքով:
Ավա՛ղ, խեղճ կանայք... Երբ դուք ուզում եք միանալ մեզ հետ.
Հավատացրեք գեթ, որ մեզ սիրում եք,
Թե ուրիշներին ձեր թե՛ն եք տալիս,
Ձեր թե՛նոցն էլ մեզ գոնե ցույց տվեք:
Մենք ձեր կամքով ենք շարժվում մշտապես,
Եվ դուք կարող եք մեզ անվերջ շարժել ձեր ուզածի պես:
Այժմ, ազնիվ եղբայր, ետ դարձեք նորից,
Սփոփե՛ք քրոջս, խնդացրեք նրան, ձեր կիներ կոչեք.
Փոքրիկ կեղծիքը բարիք է դառնում,
Երբ քաղցր շունչը շողոքորթութեան սանձում է վեճը:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Գեղեցի՛կ օրիորդ—չգիտեմ թե ձեզ էլ ինչպես
կոչեմ,

Ոչ էլ գիտեմ ես, թե ինչ հրաշքով անունս իմացար:
Ձեր ճարտար միտքը և ձեր շնորհը, որ թաքցնում եք,
Ձեզ դարձնում են է՛լ հրաշալի,

Քան թե երկրային հրաշալիքը,

է՛լ լատվածային, քան թե երկրային աստվածութիւնը:

Սովորեցրեք ինձ, չքնաղ արարած,

Ինչպես մտածել և ինչպես խոսել:

Իմ ծանր ու կոպիտ ըմբռնումիս դեմ,

Որ մխրճված է մոլորութեան մեջ, ծանծաղ է և թույլ,

Բա՛ց արեք թաքնված իմաստը ձեր այդ գերող խոսքերի:

Ինչո՞ւ եք ձգտում իմ անբիծ հոգին

Հրապուրելու անհայտ աշխարհով.

Աստվա՞ծ եք, միթե, եթե այդպես է՝ վերստեղծեք ինձ,

Վերափոխեցեք, ես ինձ հանձնում եմ ձեր զորութեանը:

Իսկ եթե այն եմ, ինչ որ եղել եմ ես մինչև հիմա,

Ապա լավ գիտեմ, որ ձեր արտասովոր քույրը կինս չէ,

Եվ պարտական չեմ նրա անկողինին.

Գնալով դեպի քեզ եմ թեքվում ես.

Օ՛, մի դուրսիր ինձ, չքնաղ ծովահարս, քո երգով այդպես,

Որ ինձ քո քրոջ հորդ արցունքների հեղեղում խեղդես:

Քե՛զ համար երգիր, որ ես խենթանամ,

Արծաթե ալյաց վրա տարածիր վարսերդ ոսկյա,

Անկողին կլինեն նրանք ինձ համար,

Եվ քուն կմտնեմ արբած այն մտքից, որ մեռնելիս էլ,

Այդպես կմեռնեմ, այդ քաղցրիկ մահով կմեռնեմ ես էլ:

Թող խեղդվի՝ սերը, եթե նա սուզվի:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Դժվեցի՞ք, ինչ է, դուք խելագարի նման եք

խոսում:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ոչ թե գժվեցի, այլ կուրացա ես. ինչպե՞ս,

չգիտեմ:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ձեր աչքն է մեղավոր:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Շողերիդ փայլից նրանք կուրացան, գեղեցի՛կ արև:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ուր հարկավոր է՝ այնտեղ նայեցեք և դուք

կբուժվեք:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Օ՛, իմ չքնաղ սեր,

Ավելի լավ է կույր լինել, քան թե խավարին նայել:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ինչո՞ւ եք դուք ինձ չքնաղ սեր ասում, քրոջս

ասացեք:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Քո խորոջ քրոջը:

ԼՈՒՍԻԱՆԱ.—

Այսինքն քույրս:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Օ, ոչ, այդ դու ես, մասն իմ թանկագին,

Աչքիս պայծառ աչք, սրտիս սիրտ անդին:

Իմ հաց և իմ բախտ, կարոտ եմ հույսի,

Իմ երկրի երկինք, տենչանք երկնքիս:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Այդ ամենը քույրս է, կամ պետք է լինի:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Եղիր այդ քույրը, ես քե՛զ եմ ասում:

Քե՛զ եմ սիրելու և կյանքս հավետ քե՛զ հետ եմ կապում,

Դու կույս ես, իսկ ես դեռ շամուսնացած.

Տո՛ւր ինձ քո ձեռքը:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Օ՛, կամաց, պարոն, համբերեք, խնդրեմ,

Քրոջս բերեմ, խորհուրդ հարցնեմ:

Գնում է:

Մտնում է Դրոմիո սիրակուզացին վագելով:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դրոմիո, ո՞ւր էս վազում:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Դուք ինձ ճանաչո՞ւմ եք, պարոն, միթե՛ ես

Դրոմիո՞ն եմ,

Միթե՛ ես ձեր ծառան եմ, արդյոք ես ե՞ս եմ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դու Դրոմիոն ես, դու իմ ծառան ես, դու ինքդ
ես:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, ես էշ եմ, ես կնոջ ստրուկ եմ, ես իմը չեմ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ո՞ւր կնոջ ստրուկն ես, և ինչպե՛ս է որ դու քոնը
չես:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նրա համար, պարոն, որ թեպետ ես իմը չեմ,

բայց պատկանում եմ մի կնոջ. մի կին, որ պահանջում է ինձ,
որ հետապնդում է ինձ և ուզում է ինձ տիրել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ պահանջ ունի քո վերաբերյալ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ճիշտ այնպիսի պահանջ, պարոն, ինչպիսին դուք
ունեք ձեր ձիու վերաբերմամբ: Նա ուզում է ինձ իր անասունը
դարձնել, տիրանալ ինձ, ոչ թե նրա համար, որ ես անասուն
եմ, այլ որ նա՝ ինքը, գերազանցապես անասնական էակ լինե-
լով, ուզում է ինձ տիրել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Իսկ ո՞վ է նա:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Մի շատ պատկառելի մարմին. այնպիսին, որի մասին չի կարելի խոսել լառանց ասելու «ձերդ ազնվություն»:
Ես այդ առևտրի մեջ շատ բարակ վաստակ ունեմ, չնայած գործը վերաբերում է չափազանց չաղ մի ամուսնություն:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Իսկ ի՞նչ ես հասկանում դու չաղ ամուսնություն ասելով:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Պարոն, նա խոհարարուհի է և ամբողջովին ճարպակալած. թե նրանից ինչ կարելի է շինել, ինքս էլ չգիտեմ. միգուցե կարելի լինի նրանից ճրագ պատրաստել և իր սեփական լույսով փախչել իրենից: Հավատացնում եմ, որ միայն այն ճրագուն, որով ծծված են նրա ցնցոտիները, կարող է վառվել լեհալան մի ամբողջ ձմռան ընթացքում, իսկ եթե նա ապրի մինչև վերջին դատաստանի օրը, ապա նա մի ամբողջ շաբաթ ավելի է վառվելու, քան մնացած բոլոր մարդիկ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ կերպարանք ունի նա:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Քոշերիս պես թուխ է, բայց երեսը նրանց պես մաքուր չէ. ինչո՞ւ համար, նրա համար, որ քրտնում է. մարդ կարող է կրունկից բարձր թաղվել նրա քրտնքի մեջ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դա մի թերություն է, որ կարելի է ջրով վերացնել:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, պարոն, այդ կեղտը ի բնե է և Նոյի ջրհեղեղն էլ նրան չէր կարող մաքրել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ է նրա անունը:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նրա անունը Յողիկ է, պարոն, բայց նրա մի ազդրից մինչև մյուս ազդրը տարածությունը այնքան երկար է, որ մի ձողաչափով և երեք քառորդով հնարավոր չէ այն չափել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Նշանակում է նա բավական լայնածավալ է:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նրա գլխից մինչև ոտքերն եղած տարածությունը նույնքան է, որքան մի ազդրից մյուսը: Նա գլոբուսի պես՝ գրնդաձև է: Նրա վրա կարելի է գտնել բոլոր երկիրները:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Նրա մարմնի ո՞ր մասում է գտնվում Բուլանդիան:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նրա հետույքում. ես այն ճանաչեցի ճահճուտներից:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որտե՞ղ է Շոտլանդիան:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Նրան ճանաչեցի իր անբերրիութունից և գտա նրա ձեռքի ափի մեջ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որտե՞ղ է Ֆրանսիան:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Նրա ճակատին, զինված է կռվի ելած մազերի դեմ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որտե՞ղ է Անգլիան:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Ես փնտրեցի կավճային ժաշոներ, բայց ոչ մի սպիտակութուն չգտա նրանց մեջ: Կարծում եմ, որ նա գտնվում է նրա վարի ծնոտի մեջ, դատելով աղային աչն հոսանքից, որ վազում է Ֆրանսիայի և նրա միջև:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Իսպանիան որտե՞ղ է:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Ժշմարիտն ասած, ես Իսպանիան չգտա, բայց նրա շնչի մեջ զգացի իսպանական տոթը:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որտե՞ղ են Ամերիկան և երկու Հնդկաստանները:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Օ՛, պարոն, նրա քթի վրա, թանկագին քարերով, ազնիվ կարկեհաններով և շափյուղաններով զարդարված, որոնք տարածել են իրենց դանձը Իսպանիայի ջերմ շնչին, որն ուղարկեց նավերի ամբողջ արմադաներ բեռնավորվելու նրա քթի տակ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Որտե՞ղ են Բելգիան և Նիդեռլանդիան:

ԳՐՈՄ. ՍԻՐ.— Օ՛, պարոն,— ես չճամարձակվեցի լայդքան վար նայել... Մի խոսքով այդ գարշելին, այդ կախարդը իրավունք բանեցրեց վրաս, ինձ կոչեց Դրոմիո, երդվեց որ ես իր նըշանածն եմ. պատմեց թե ինչ մասնավոր նշաններ ունեմ իմ մարմնի վրա. մի խալ իմ ուսին, մի նշան՝ վզիս վրա, մի մեծ դորտնուկ ձախ թևիս և աչնպիսի ճշտություն, որ ես ապուշ կտրած փախա նրանից, ինչպես կախարդից:

Եվ եթե կուրծքս կռիված չլիներ ամուր հավատից,

Սիրտս էլ պողպատից,

Նա դարպասի շան կվերափոխեր

Եվ կստիպեր ինձ շամփուր պտույտ տալ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Հենց հիմա վաղիր դու նավահանգիստ,

Եվ եթե քամի փչելիս լինի որևէ կողմից,

Ես այս զիշերը ալստեղ չեմ մնա:

Թե գտնես մի հավ լողալու պատրաստ՝ ե՛կ հրապարակ,

Ուր ես կգրոսնեմ մինչև ետ դառնաս:

Երբ բոլորն այստեղ մեզ ճանաչում են, իսկ մենք ոչ ոքի,
Ուրեմն լավ է մեր իրերն առած փախչենք այստեղից:
ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Ինչպես փախչում է մարդն արջի ահից,
Փախչեմ նրանից, ով պատրաստվում է կին դառնալու ինձ:

Գնում է:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Վհուկներ են լոկ այստեղ բնակվում,
Ուստի ժամանակն է արագ հեռանալ:
Ես սարսափով եմ հիշում այն մեկին,
Որն համարում է ինձ իր ամուսին. սակայն իր քույրը,
Որ գեղեցիկ է, լեզվով ու տեսքով այնքան թովչական,
Նա համարյա թե ինձ իմ անձի դեմ դարձրեց դավաճան.
Սակայն, որպեսզի իմ կործանմանը ես չմասնակցեմ,
Եկ ականջներս այդ ծովահարսի երգի դեմ փակեմ:

Մտնում է Անջելոն:

ԱՆՋԵԼՈ.— Տեր Անտիֆոնոս:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.—

Այդ իմ անունն է:

ԱՆՋԵԼՈ.— Ես այդ լավ գիտեմ. ահա ձեր շղթան:

Ուզում էի ձեզ պանդոկում տեսնել,

Շղթան պատրաստ չէր, ուստի, ուշացա:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ անեմ շղթան:

ԱՆՋԵԼՈ.— Ինչ որ կամենաք. ձեզ համար եմ շինել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ի՞նչ համար. ես ձեզ պատվեր չեմ տվել:

ԱՆՋԵԼՈ.— Ոչ թե մեկ, երկու, այլ քսան անգամ պատվեր եք
տվել:

Շղթան տուն տարեք և ուրախացրեք ձեր կնոջն այսօր,

Ընթրիքի պահին ես ձեզ մոտ կգամ

Եվ աշխատանքիս վարձը կստանամ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Խնդրում եմ, պարոն, փողն ա՛յժմ վերցրեք,

Ես վախենում եմ, որ հետո ո՛չ փող ո՛չ շղթա տեսնեք:

ԱՆՋԵԼՈ.— Ինչ զվարթ մարդ եք. մնացեք բարի:

Գնում է:

ԱՆՏԻՅ. ՍԻՐ.— Թե սա ինչ բան է, չեմ կարող ասել.

Թայց ևս կարծում եմ՝ չկա մի հիմար,

Որ մերժի վերցնել Վի սիրուն շղթա բերված իր համար:

Մարդիկ, տեսնում եմ, այս քաղաքի մեջ շատ հեշտ են
ապրում,

Իրր փողոցներում ամեն տեղ նման գանձեր են տեսնում:

Դեռ հրապարակ և Դրոմիոյին այնտեղ սպասեմ,

Իմ լողալու նավ լինի պատրաստ, նույն ժամին մեկնեմ:

Գնում է:

ԱՐԱՐՎԱՆԻ ԶՈՐԻՈՐԴ

Ցեառան առաջին — *Հրապարակ:*

Մտնում եմ Երկրորդ վաճառականը, Անջելոն և մի ոստիկան:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ. — Ինքներդ գիտե՞ք՝ Հոգեգալուստից պարտ եք
այդ փողը,

եվ այն օրվանից ես չեմ պահանջել պարտքս ձեզանից.

Զէի պահանջի նույնպես և այժմ. բայց քանի որ ես
Հարկադրված եմ մեկնել Պարսկաստան, և ճամփիս համար
Ինձ գումար է պետք,

Ուտի, Ղճարեք իմ փողը հիմա,

Թե չէ, կասեմ, որ այս ոստիկանը ձեզ ձերբակալե:

ԱՆՋԵԼՈ. — Այն գումարի չափ, որ ես ձեզ եմ պարտ,

Պարտական է ինձ Անտիֆոլոսը:

Եվ այն վայրկյանին, երբ ես ձեզ տեսա,

Նրան տվեցի մի սիրուն շղթա. ժամը ճիշտ հինգին

Նրանից պետք է արժեքն ստանամ:

Թե ձեզ հաճո է, ինձ հետ միասին իջնենք նրա տուն,

Պարտքս ղճարեմ և շնորհակալ լինեմ ձեզանից:

Մտնում եմ Անտիֆոլոս Եփեսոսցին և Դրոմիո Եփեսոսցին:

ՈՍՏԻԿԱՆ. — Այդ նեղությունից ձեզ ազատեցեք,

Անտիֆոլոսը այստեղ է գալիս:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ. — Մինչև ես գնամ ոսկերիչի մոտ,

Դու գնա և ինձ մի մտրակ գնիր.

Հյուրասիրել եմ ուզում նրանով

Ես իմ կնոջն ու իր ծառաներին,

Որ օր ցերեկով սեփական դուռս իմ դեմ փակեցին:

Ուսոյ կա՛ց, այստեղ է, տես, ոսկերիչը: Գնա՛, մտրակ գնիր
եւ տուն բեր շտապ:
ԴՐՈՒՄ. ԵՓԵՍ.— Տարեկան հազար ոսկի եկամուտ— մտրա՛կ
եմ գնում:

Գնում է:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ձեզ վստահողը գո՛հ է ձեզանից...

Դուք խոստացաք գալ չե բերել շղթան,

Սակայն ո՛չ շղթան, ո՛չ էլ ձեզ տեսա:

Անշուշտ կարծեցիք, որ մեր սերն երկար կարող է տևել,

Եթե շղթայով ամրապնդվի այն, ուստի և, չեկա՛ք:

ԱՆՋԵԼՈ.— Վե՛րջ ձեր կատակին. ահա այն թուղթը,

Որտեղ գրված է թե ինչ ծանրութուն ունի ձեր շղթան,

Հաշվելով մինչև վերջին կարատը,

Ոսկու որակը և գործիս վարձը,

Որը ընդամեն երեք դուկատ է ավել այն փողից,

Որ պարտ եմ այժմ ես այս պարոնին:

Խնդրում եմ իսկույն վճարել նրան,

Որովհետև նա մեկնելու է այժմ

Եւ սպասում է այդ փողի համար:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես այդքան գումար ինձ հետ չեմ վերցրել.

Բացի յայդ, գործեր ունեմ քաղաքում:

Բարի Անջելո, այս պարոնի հետ գնացեք իմ տուն,

Ձեզ հետ վերցրեք շղթան, տվեք կնոջս

Եւ արժեքն առեք,

Միգուցե ես գամ, երբ այնտեղ լինեք:

ԱՆՋԵԼՈ.— Ուրեմն դո՛ւք եք շղթան բերելու:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ո՛չ, ձեզ հետ վերցրեք, գուցե ուշանամ:

ԱՆՋԵԼՈ.— Լավ, ես կտանեմ: Շղթան ձեզ մո՛տ է:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եթե ինձ մոտ չէ, հուսով եմ պարոն, որ նա
ձեզ մոտ է.

Թե չէ, ետ կգաք առանց ձեր փողի:

ԱՆՋԵԼՈ.— Պարոն, խնդրում եմ՝ ինձ տվեք շղթան,

Մակընթացն ու քամին կանչում են սրան.

Ես մեղավոր եմ, որ նրան երկար պահեցի այստեղ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Բարերա՛ր աստված. դուք այդ կատակով

Ուզում եք բլանդով չգալու ձեր այն հանցանքը քավել:
Եվ ինձ էր տեղիւն ձեզ նախատել, որ շղթան չբերիք,
Բայց առաջինը դուք եք քրթմնջում անսանձ կնոջ պես:
Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Ժամը թռչում է, խնդրում եմ, պարոն, ինձ
համարու դրեք:

ԱՆՋԵԼՈ.— Լսո՞ւմ եք ինչպես ստիպում է ինձ. շղթա՛ն, ասում
եմ...

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ասացի՛ շղթան տվեք իմ կնոջ և փողն ստացեք:
ԱՆՋԵԼՈ.— Հերիք է, պարոն, ինքներդ գիտեք՝

Հենց նոր տվեցի ես ձեզ այդ շղթան,

Կամ վերադարձրեք, կամ նշանաբան տվեք ինձ տանեմ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ամո՛թ է, պարոն, ձեր կատակն արդեն իր
շափը անցավ,

Որտե՞ղ է շղթան, ցույց տվեք խնդրեմ:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Իմ գործերը ինձ թույլ չեն տալիս ձեր
կատակը լսել.

Պարոն, ուզո՞ւմ եք փողս վճարել:

Եթե չեք ուզում, ես ուստիկանին կհանձնեմ նրան:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես ձեզ վճարե՛մ. իսկ ի՞նչ վճարեմ:

ԱՆՋԵԼՈ.— Փողը, որ պարտ եք շղթայի դիմաց:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ձեզ ոչինչ պարտ չեմ, մինչև ձեզանից շղթան
չստանամ:

ԱՆՋԵԼՈ.— Ինքներդ գիտեք, այն ձեզ տվեցի ես կես ժամ առաջ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ոչինչ չեք տվել, և դուք դրանով ինձ անպատ-
վում եք:

ԱՆՋԵԼՈ.— Սակայն ժխտելով, ավելի շատ եք դուք ինձ
անպատվում:

Նկատի առեք թե ինչքան ծանր է դա վարկիս համար:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Ուրեմն, ուստիկան, ձերբակալեցեք խնդրեմ
այս մարդուն:

ՈՍՏԻԿԱՆ.— Ես կատարում եմ:

Դուքսի անունով հարկադրում եմ ձեզ հնազանդվել ինձ:

ԱՆՋԵԼՈ.— Դա իմ պատիվն է շոշափում արդեն:

Կամ համաձայնվեք այդ գումարն ինձ տալ,

Կամ կասեմ, որ այս ուստիկանը ձեզ

Բա՛նտ առաջնորդե:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Վճարեմ ես քեզ մի բանի համար,

Ինչ որ ես երբե՛ք ստացած չկամ.

Ձերբակալիր ինձ, հիմար արարած, թե հանդգնում ես:

ԱՆՋԵԼՈ.— Ահա քո վարձը, շուտ ձերբակալիր սրան, ոստիկան:

Նման դեպքում ես եղբորս չէի ների,

Թե ինձ անպատվեր այդքան քաջահայտ:

ՈՍՏԻԿԱՆ.— Ձերբակալում եմ ձեզ այժմ, պարոն: Լսեցի՞ք բո-
ղոքը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Հնազանդվում եմ, մինչև քեզ հանձնեմ ես
երաշխագիր.

Բայց դո՛ւ, սրիկա, այս խաղի համար թանկ կվճարես,

Այնքան թանկ, որ քո խանութում ոչ մի մետաղ չմնա:

ԱՆՋԵԼՈ.— Իսկ եփեսոսում, պարոն, այնպիսի մի դատ քաջ
կանեմ,

Որ նախատինքով ես ձեզ կսպանեմ. ես չեմ կասկածում:

Մտնում է Դրոմիո սիրակուզացին:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Էպիդամնոնից մի նավ կա, տեղ իմ,

Որ սպասում է իր նավապետին,

Որպեսզի իսկույն առագաստ պարզե.

Իրերը, պարոն, արդեն նավ տարա.

Գնել եմ յուրը, բալասան, օղին:

Նավը պատրաստ է ուղևորվելու.

Ափից փչում է մի լուրախ քամի,

Եվ նրանք միայն ձեզ են սպասում ըստ նավապետին:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ցնդե՞լ ես, ինչ է, դու գժված ոչխար,

Էպիդամնոնից ինձ համար այդ ի՞նչ նավ է սպասում:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Այն նավը, որտեղ ինձ ուղարկեցիք մեզ տեղ
վարձելու:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դու հարբած ստրուկ, քեզ ուղարկեցի մտրակ
գնելու,

Եվ բացատրեցի ինչ նպատակով և ինչու համար:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ թե մտրակի, այլ նավի համար ուղարկեցիք
ինձ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես այդ խնդիրը ազատ ժամանակ քննության
կառնեմ,

Սովորեցնելով քո ականջներին ինձ ուշով լսել:
Ազրիանայի մոտ շտապիր հիմա,
Տուր այս բանալին և խսա նրան,
Որ իմ դարակում, որը ծածկված է տաճկական գորգով,
Դուժատներով լի քսակ կա պահված, թող ինձ ուղարկե:
Անա դու նրան, որ ես փողոցում ձերբակալված եմ,
Դա ինձ կփրկե:
Շտապիր, սարուկ:
Այժմ, ոստիկան, ինձ բանտ տար մինչև իմ փողը հասնի:

Երկրորդ վաճառականը, Անջելոն, ոստիկանը և Անտիֆոլոս
Եփեսոսցին գնում են:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ազրիանայի՛ մո՛տ. այսինքն այնտեղ, ուր մենք
ճաշեցինք,
Ուր Դուգաբելը ինձ ստիպում էր իր հետ պսակվել.
Բայց ես կարծում եմ, որ նա իմ գրկի համար շատ հաստ է:
Թեպետ չեմ ուզում, բայց պարտավոր եմ ես այնտեղ գնալ,
Ծառան իր տիրոջ պետք է ենթարկվի:
Գնում է:

Տեսարան երկրորդ— Անտիֆոլոս Եփեսոսցու տունը:

ԱԴՐԻԱՆԱ.— Ա՛, քույր Լուսիանա. մի՞թե՞ նա ուզեց քեզ
հրապուրել:

Դու կարողացա՞ր նրա աչքերում պարզորոշ կարդալ՝
Լո՛ւրջ ասաց, թե՛ ոչ,
Նրա երեսը վա՞ռ էր, թե՛ դժգույն, տխու՞ր, թե՛ ուրախ:
Երբ նա խոսում էր,
Դու հետեցի՞ր սրտի հուզմունքին,
Թե՛ ինչ երձնգ էր տալիս իր դեմքին:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Նախ ասաց, որ դու իր վրա ոչ մի իրավունք
չունես:

ԱԴՐԻԱՆԱ.— Ուզում է ասել, որ չի շնորհել նա ինձ իրավունք:

Առավել ցա՛վ ինձ:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ապա՛ երգվեց, որ օտարական է:

ԱԴՐԻԱՆԱ.— Նա ճիշտ է երդվել, թեպետ նա հայտնի
երգմնազանց է:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Հետո սկսեցի քո մասին խոսել:

ԱԴՐԻԱՆԱ.— Իսկ նա ի՞նչ ասաց:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Այն սերը, որ քեզ համար խնդրեցի,

Նա սկսեց ինձնից խնդրել իր համար:

ԱԴՐԻԱՆԱ.— Ինչո՞վ համոզեց, որ իրեն սիրես:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Խոսքերով, որոնք պարկեշտ գործի մեջ, կարող են
հուզել...

Նախ նա գովեց իմ գեղեցկությունը, ապա՝ իմ լեզուն:

ԱԴՐԻԱՆԱ.— Իսկ դու սիրալի՞ր պատասխանեցիր:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Համբերություն, քույր:

ԱԴՐԻԱՆԱ.— Ձե՛մ կարող, ոչ էլ համբերել կուզեմ...

Եթե ոչ սիրտս, գոնե իմ լեզուն թող իր կամքն ասե.

Նա ծեր է, տձև և սապատավոր,

Երեսով տգեղ, կազմով հրեշավոր,

Անազնիվ, հիմար, անսիրտ ու տափալ,

Ձևով լանդոնի, հոգով ալանդակ:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Այդպիսի մարդը խանդ կառաջացնի՞:

Ո՞վ է հառաչում անցած-գնացած շարիքի համար:

ԱԴՐԻԱՆԱ.— Միայն խոսքով եմ ես նրան ատում:

Բայց կուզենայի որ այլոց համար

Նա դրանից էլ տգեղ երևար:

Իր բնի համար թռչունն այն ժամ է տխրագին ճշում,

Երբ որ նրանից հեռու է թռչում.

Նրա համար իմ սիրտն է աղոթում,

Չնայած լեզուս անեծք է թափում:

Մտնում է Դրոմիո սիրակուզացին:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Դարա՛կը, քսա՛կը, շո՛ւտ արեք, շո՛ւտ:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ինչո՞ւ շունչդ կտրվեց:

ԴՐՈՄ. ՍԻՐ.—

Արագ վազելուց:

ԱԴՐԻԱՆԱ.— Ասա, Դրոմիո, ո՞ւր է պարոնդ: Ո՞ղջ և առողջ է:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ, Տարտարոսի ընդերքումն է նա, դժոխքից

վատթար,

Նրան բռնել է հավիտենական զգեստով մի դև,

Որի քար սիրտը պողպատով է կոճկված.

Մի իսկական դե՛կոպիտ և դաժան,

Մի գայլ ահավոր, գայլից էլ գազան,

Մի էակ գոմշու կաշով ծածկված,

Անազնիվ ընկեր, որ ետեից է

Իր ձեռքը մարդու ուսերին դնում,

Որը փակում է հրապարակներ, փողոց և նրբանցք:

Մի շուն, որ թեև խոտոր է վազում,

Բայց միշտ դտնում է իսկական հետքը:

Մի մարդ, որ նախքան դատաքտանի օր,

Դժոխք է քշում խեղճ հոգիներին:

ԱԴՐԻԱՆԱ.— Շո՛ւտ ասա, այ մարդ, ի՞նչ է պատահել:

ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Չգիտեմ թե ինչ, բայց գիտեմ որ նա ձերբակալ-
ված է:

ԱԴՐԻԱՆԱ.— Ձերբակալվա՞ծ է, բայց ո՞ւմ բողոքով:

ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Չգիտեմ թե ում,

Բայց գիտեմ՝ նրան բռնողը գոմշի կաշի է հագած.

Ուզո՞ւմ եք, տիկին, որպես փրկագին այն փողն ուղարկե՛լ,

Որ գտնվում է նրա դարակում:

ԱԴՐԻԱՆԱ.— Գնա՛ փողը բեր, քույր:

Լուսիանան գնում է:

Զարմանալի է,

Որ ինձնից գաղտնի պարտք է արել նա.

Ասա, մուրհակի համար չե՞ն բռնել:

ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Ոչ թե մուրհակի, այլ մի ավելի պինդ բանի

համար—

Շղթայի համար... լսո՞ւմ եք, զընգաց:

ԱԴՐԻԱՆԱ.— Ի՞նչ զընգաց, շղթա՞ն:

ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Ոչ, ժամացույցը. գնալուս ժամն է.

Ժամը՝ երկուսն էր, երբ որ նրանից հս բաժանվեցի,

Իսկ այժմ մեկն է:

ԱԴՐԻԱՆԱ.— Երբեք չեմ լսել ժամը ետ դնա:

ԴՐՈՄ՝ ՍԻՐ.— Գնում է, այո:

Երբ որեւէ ժամ ճամփին տեսնում է մի ոստիկանի
Վախից դառնում է:
ԱԳՐԻԱՆԱ.— Ինչ է, չի՛նի՞ ժամն էլ պարտք ունի. ի՞նչ հիմար
ես դատում:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ժամանակը կատարյալ սնանկ է. և ավելի շատ
նա պարտք է վերցնում, քան ինքը արժե:
Միաժամանակ նա հայտնի գող է. չե՞ք լսել, միթե,
Մարգիկ ասում են, որ ժամանակը
Դադտնի սահում է— գիշեր թե ցերեկ.
Եթե նա գող է և պարտքեր ունի,
Իր ճամփին տեսնի թե մի ոստիկան,
Նա ետ չի՞ գնա, օրվա մեջ մի ժամ:

Լուսիանան վերադառնում է:

ԱԳՐԻԱՆԱ.— Գնա՛, Դրոմիո, ահա և փողը, ա՛ռ և սլացիր,
եվ պարոնիդ հեւ շուտ վերադարձիր.
Եկ գնանք, քույր իմ, ևս հալումաշ եմ լինում մտքերից,
Որ մերթ սփոփում, մերթ վիշտ են բերում:

Գնում են:

Տեսաւան Երուդ— Հրապարակ:

Մտնում է Անտիփոլոս սիրակուզացին:

ԱՆՏԻՖ.— Ում հանդիպում եմ՝ ողջունում է ինձ,
Կարծես թե ես իր հին բարեկամն եմ.
Ինձ անունով են ամենքը կոչում.
Ոմանք փող տալիս, ոմանք տուն կանչում,
Ոմանք հայտնում են շնորհակալություն օգնությանս համար:
Ոմանք խնդրում են ապրանքներ գնել:
Հենց նոր մի դերձակ ինձ խանութ կանչեց
Ցույց տվեց մետաքս, գնված ինձ համար,
Եվ անմիջապես մարմնիս շափն առավ.
Անշուշտ դեեր չեն սրանք ամենքն էլ
Եվ լապլանդական ստալանաներ են աշատեղ բնակվում:

ԴՐՈՄ, ՍԻՐ.— Ահա այն ոսկին, որի համար ինձ ուղարկեցիրք: Բայց ինչ եմ տեսնում. դուք ազատվեցի՞ք նոր զգեստ հագած հին Ադամի կերպարանքից:

ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Այս ի՞նչ ոսկի է և ինչ Ադամի մասին ես խոսում:

ԴՐՈՄ, ՍԻՐ.— Ոչ այն Ադամի, որ դրախտն էր հսկում, այլ այն Ադամի, որ բանտն է պահում. նա, որ հագած է հորթի կաշի, հորթ՝ որ սպանված է անառակ որդու համար, նա, որ շար հրեշտակի՛ պես ձեր ետեից եկավ, պարոն, և զրկեց ձեզ ազատությունից:

ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Ես քեզ չեմ հասկանում:

ԴՐՈՄ, ՍԻՐ.— Զե՞ք հասկանում. շատ պարզ է. ես խոսում եմ մի մարդու մասին, որ շրջում է կաշեպատ թավջութակի պես. մի մարդ, որ երբ տեսնում է հոգնած պարոնների, խփում է նրանց ուսին և տանում է հանգստացնելու... Նա, որ գլխափրատ է դեպի կոտր ընկած մարդիկ և նրանց երկարատև ապաստարան է տալիս. մի մարդ, որ իր մահակով արժևի մեծ հերոսություններ է կատարում, քան թե մովրը իր նիզակով:

ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Դու ոտտիկանի՞ն նկատի ունես:

ԴՐՈՄ, ՍԻՐ.— Այո, պարոն, ես խոսում եմ պարբաճանաչ աստիկանի մասին. նա, որ կարգը խախտող մարդուն պատառխանաւովության է կանչում. մեկը, որ մարդու վրա նայում է որպես քնել կամեցողի և թսում է նրան.

«Աստված ձեզ բարի հանգիստ տա, պարոն»:

ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Վերջ տուր քո հիմարություններին, պարոն. կա՞ որեւէ նաւ, որ պատրաստ է այս գիշեր մեկնել: Կարո՞ղ ենք գնալ:

ԴՐՈՄ, ՍԻՐ.— Ես դեռ մի ժամ լռաջ ձեզ ասացի, որ «Արշավ» նավը այս գիշեր ճամփա է ընկնում. բայց հետո դուք բռնվեցիրք ոտտիկանի կողմից, որը ստիպեց ձեզ սպասել «Հետաձգում» բեռնանավին: Ահավասիկ այն հրեշտակները, որոնց ետեից ուղարկեցիրք ինձ, որ նրանք ձեզ փրկեն:

ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Այս խեղկատակը անշուշտ ցնդել է, ցնդել եմ և ես.

Եվ թափառում ենք անուրջների մեջ:

Ա՛խ, թե դտնվեր մի օրհնյալ ոգի, որ ազատեր մեզ:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՆԻ.— Բարի հանդիպում, բարի հանդիպում, տեր Անտիֆոնոս.

Տեսնում եմ, պարոն, որ ոսկերիչին լարդեն գտել եք:

Այդ այն շղթան է, որ խոստացաք ինձ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Չքվի՛ր սատանա և մի փորձիր ինձ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Մի՞թե այս տիկինը, սատանան է, տեր:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դա դէն է.

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ոչ նա դեից էլ վատթար է. նա դեի էգն է, որն այստեղ է եկել թեթեալարո կնոջ կերպարանքով. ահա թե ինչու, երբ կինը ասում է «աստված, անիծիր ինձ», այդ միկնուչն է թե նա լախ ճաստված ինձ տնառակուհի դարձրու»: Դրված կա նույնպես, որ նրանք մարդկանց հայտնվում են լուսավոր հրեշտակների տեսքով. լուսը կրակի շրջունքն է, իսկ կրակն այրում է. ԵՐԾՈ, թեթև կանայք նույնպես այրում են: Նրա՛ն չմոռենաւ:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՆԻ.— Ձեր ծառան և դուք շափաղանց ուրախ եք, այսօր, պարոն: Ուզո՞ւմ եք ինձ հետ գալ: Ընթրիքի համար անհրաժեշտ ուտելիքը այստեղից կանոնենք:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Պարոն, եթե համաձայնվեք գնալու, ապա նկատի ունեցեք, որ ձեզ ճաշ են մատուցելու, որն ուտվում է դրալով, ուստի ձեզ հետ երկարապուշ գդալ վերցրեք:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ինչո՞ւ, Դրոմիո:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Որովհետև դեի հետ ճաշողը պետք է երկարապուշ գդալ ունենա:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Չքվիր, ուրեմն, դե:

Այդ ի՞նչ ընթրիքի մասին ես խոսում:

Դու մի կախարդ ես, ինչպես բոլորդ.

Նզովում եմ քեզ, թո՛ղ ինձ և գնա:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՆԻ.— Տվեք մատանիս, որ ճաշին վերցրիք, կամ թե խոստացած շղթան տվեք ինձ մատանուս դիմաց. եվ ես կդնամ ձեզ հանգիստ թողած:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Վհուկներ կան, որ եղունգի կտոր,

Մի շյուղ կամ մի մաղ, կամ թե արյունի կաթիլ են ուզում,

Կեռասի կորիզ, բորոց կամ ընկուղ.

Իսկ սա, այս ագահը, շղթա է ուզում:

Զգուշացիր, տեր, Լէթե շղթան տաք,
Դեւը այդ շղթան այնպէս կցնցի,
Որ սարսափահար կանն ինձ ու ձեզ:
ԿՈՒՐՏԻԶՁԱՆՈՒՀԻ.— Խնդրում եմ, պարոն, մատանիս տվեք, կամ
տվեք շղթան.

Կարծեմ, չեք ուզում դուք ինձ կողոպտել:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Զբացի՛ր, կախարդ. գնա՛նք, Դրոմիո:
ԴՐՈՄ. ՍԻՐ.— «Մեղք է փքվելը» սիրամարդն ասաց.
Դուք այդ գիտեք, տիկին:

Անտիֆոլոս սիրակուզացին և Դրոմիո սիրակուզացին գնում են:
ԿՈՒՐՏԻԶՁԱՆՈՒՀԻ.— Այժմ կասկած չկա, Անտիֆոլոսը
խելագարված է,

Այլապէս երբեք այդպէս չէր վարվի:
Քառասուն դուկատ արժող մատանիս ինձանից առավ
եւ վոտխարենը շղթա խոստացավ.
Իսկ այժմ նա ինձ ոչ մեկն է տալիս և ոչ մյուսը:
Ահա, թե ինչու եզրակացնում եմ, որ խելագար է.—
Բացի գծովյան այս ներկա դեպքից,—
Դա խենթութեւն ալսն պատմությունն է,
Որ ճաշի վրա նա պատմեց յայսօր,
Իբր թե նրան չեն թողել մտնել իր սեփական տուն:
Հնարավոր է, որ նրա կինը,
Տեղյակ լինելով նրա գծովյան,
Դիտմամբ փակել է դռները իր դեմ:
Մնում է, որ ես նրա տուն գնամ,
Կնոջը պատմեմ, որ նա կատաղած
Ներս մտավ իմ տուն ու իմ մատանին բռնութեամբ կորզեց:
Ես այդ միջոցն եմ ընտրում շատ հարմար,
Քառասուն դուկատը ցած է ինձ համար:

Գնում է:

Տեսարան չորրորդ— Մի փողոց:

Մտնում են Անտիֆոլոս Էփեսոսցին և ոստիկանը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Մի վախեցիր, մարդ. ես չեմ փախչելու:
Նախքան բաժանվելս ես քեզ նույնպիսի մի գումար կտամ,

Որի համար ինձ ձերբակալեցիր:
Կինս զայրացած է և սուրհանդակիս
Դժվար հավատա:
Որ Եփեսոսում ձերբակալված եմ,
Շատ տարօրինակ նրան պիտ թվա:

Մտնում է Դրոմիո Եփեսոսցիին մտրակով:

Ահա իմ ծառան, կարծեմ փողն է բերում:
Բերեցի՞ր դու այն, որի ետևից քեզ ուղարկեցի:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Վերցրե՛ք... խառնվելով եմ,— որ սրանով
դուք կարող եք բոլորին վճարել:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Բայց ո՞ւր է փողը:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ի՞նչպես թե ուր է. փողը տվեցի մտրակի հա-
մար:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Հինգհարյուր դուկատ մի մտրակի գի՛ն:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Այդ փողով, պարոն, ես կարող եմ հինգ հար-
յուր մտրակ գնել:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Քեզ ինչո՞ւ համար տուն ուղարկեցի:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Մտրակի համար, որ և բերել եմ:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Որով և ես քեզ պիտի ողջունեմ:

Ծեծում է նրան:

ՈՍՏԻԿԱՆ.— Համբերեք, պարոն:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ոչ թե նա, այլ ես պետք է համբերեմ, օ՛, ձա-
խորդություն:
ՈՍՏԻԿԱՆ.— Լեզուդ քեզ քաշիր:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ավելի լավ է նրան համոզեք, որ իր ձեռքերը
ինձանից քաշե:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դու պոռնկորդի, և դու անզգամ:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ես կցանկանայի անզգա լինել, պարոն, որ չըզ-
գայի ձեր հարվածները:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Հարվածից բացի ոչինչ չես զգում. էշն էլ է
այդպես:
ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ես էշ եմ, իսկապես. դուք այդ կարող եք ապա-
ցույցել իմ երկար աղանջներով: Իմ ծննդյան օրից մինչև այս

վայրկյանը ես նրան ծառայում՝ եմ և իմ ծառայության դիմաց հարվածներից բացի նրանից ոչինչ չեմ ստացել: Երբ ես մըրսում եմ, նա ծեծելով ինձ տաքացնում է. երբ ես տաք եմ, նա ծեծելով ինձ հովացնում է. երբ ես քնում եմ, նա ծեծով ինձ արթնացնում է. երբ ես նստած եմ, նա ծեծով ինձ բարձրացնում է. ծեծով դուրս է վռնդում ինձ, երբ տնից գնում եմ. ծեծով նա դիմավորում է ինձ, երբ դրսից տուն եմ դառնում: Ինչպես մուրացիկն իր մանկիկին, այնպես էլ ես ուսերիս վրա շարունակ ծեծ եմ կրում. անգամ կարծում եմ, որ երբ նա ինձ հաշմանդամ դարձնի, ես ծեծի հետ դռնեղուռ անցնելով ուղորմություն եմ խնդրելու:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դե, այժմ գնանք. ահա և կինս:

Մտնում են Ադրիանան, Լուսիանան, Կուրտիզանանքին
և վարժապետ Պինչը:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Տիրուհի, respice finem, հիշեք ձեր վերջը, կամ ինչպես թութակն է ասում. «Զգուշացեք մտրակի ծայրից»:

ԱՆՏԻՖ. ՍԻՔ.— Լուսի, ես, թե ոչ:

Մեծում է նրան:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՀԻ.— Ի՞նչ կասեք այժմ, ձեր ամուսինը մի՞թե
գժված չէ:

ԱԴՐԻԱՆԱ.— Իր կոպտությունը այդ է վկայում:

Բարի դուկտոր Պինչ, դուք հմայող եք,

եւս վերադարձրեք նրան իր խելքը,

Զեղ կհատուցեմ ինչ որ պահանջեք:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Ավա՛ղ, աչքերը ինչ կատաղի են, և ինչ ահավոր:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՀԻ.— Կատաղությունից ի՞նչպես է զողում:

ՊԻՆՉ.— Տվեք ձեր ձեռքը և թույլ տվեք ձեր երակը շոշափել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ահա իմ ձեռքը, թույլ տվեք նրան ձեր խականջը
շոշափել:

Ապտակում է նրան:

ՊԻՆՉ.— Հրամայում եմ քեզ, ով այս մարդու մեջ մտած Սատանա,
նա,

Հնազանդվելու սուրբ ազոթքներին

Եվ քո խավարի աշխարհը խակույն վերադառնալու.

Վանո՛ւմ եմ ես քեզ երկնքի բոլոր սրբոց անունով:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Լուի՛ր, ցնդած կախարդ, լուի՛ր, ես խենթ չեմ:

ԱԴՐԻԱՆԱ.— Օ՛, երանի թե դու չլինեիր, ով դժբա՛խտ հոգի:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Սիրելիս, ուրեմն, սրա՛նք են եղել քո ընկերները.

Եվ այս տղա՛ն է քրքում՝ երեսով

Քեզ հետ ցնծացել իմ տան մեջ այսօր,

Երբ իմ դեմ փակ էր դուռը հանցավոր,

Եվ ես սեփական տնից դուրս արված:

ԱԴՐԻԱՆԱ.— Օ, ամուսինս, աստված է վկա,

Որ այսօր ինձ հետ դու տանն ես ճաշել,

Ուր մինչև այժմ եթե մնայիր,

Դու կազատվեիր թե՛ զրպարտանքից

Եվ թե բացահայտ այս ամոթանքից:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես տանն եմ ճաշե՛լ: Քո կարծիքն ի՞նչ է այդ

մասին, անբան:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Պարոն, ճիշտն ասած, տանը չէք ճաշել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եվ դուռս մի՞թե փակ չէր իմ աստջ:

Եվ ես դուրս արված:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ձեր դուռը փակ էր և դուք դուրս արված:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եվ նա ինքը չէ՞ր, որ ինձ անպատվեց:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Sans fable, այո նա ինքն էր որ ձեզ անպատ-

վեց:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եվ արդյոք նրա խոհարարուհին չէ՞ր,

Որն ինձ հայհոյեց, անարգեց, ծաղրեց:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Նա՛ այդպես արավ. խոհանոցի կույսը ձեզ սա-

տիկ ծաղրեց:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եվ ես կատաղած չփախա՛մ արդյոք:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ճիշտն ասած, փախաք, այդ վկայում են իմ
ոսկորները:

Որոնք զգում են այդ կատաղության մեծ զորությունը:

ԱԴՐԻԱՆԱ.— Միթե՞ լավ բան է դեմ գնալ նրան:

ՊԻՆՉ.— Վտանգավոր չէ, այդ մարդը նրան լավ է հասկանում,

Եվ զիջումներով մեղմում է նրա կատաղությունը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դո՛ւ ստիպեցիր, որ բսկերիչը ինձ բանտարկե՛լ տա:

ԱԴՐԻԱՆԱ.— Ավա՛ղ, չէ որ ես Դրոմիոյի հետ,—որը այստեղ է,— Փող ուղարկեցի քեզ ազատելու,

Երբ դրա համար նա ինձ մոտ եկավ:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Փո՛ղ իմ միջոցո՞վ:

Բարեմաղթանքներ և ցանկություններ, հնարավոր է,

Բայց ոչ մի գրոշ ես չեմ ստացել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Մի՞թե նրա մոտ դու չգնացիր

Դուկատներով լի քսակի համար:

ԱԴՐԻԱՆԱ.— Նա եկավ և ես քսակը տվի:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Աչքովս տեսա, որ փողը ավելց:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Իսկ աստվածը և մտրակագործը տեսան թե
ինչպե՛ս

Ես ուղարկվեցի մտրակ գնելու:

ՊԻՆՉ.— Տիրուհի, տերն էլ, ծառան էլ գիժ են.

Այդ երևում է նրանց դաւլահար

Եվ մեռելատիպ կերպարանքներից:

Նրանց պետք է կապել և մի խավարչոթին խուցի մեջ նետել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ասա, դու ինչո՞ւ իմ առաջ այսօր դուռը
փակեցիր,

Եվ դու ինչո՞ւ ես քսակն ուրանում:

ԱԴՐԻԱՆԱ.— Աղնիվ ամուսին, քո դեմ չեմ փակել մեր դուռը
այսօր:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Իմ աղնիվ պարոն, սակու քսակը ես չեմ ստացել,

Բայց հաստատում եմ դուռը մեր առաջ փակված է եղել:

ԱԴՐԻԱՆԱ.— Խարդախ սրիկա, թե մեկն ես ստում և թե մյուսը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Անառակ-խարդախ, իսկ դու ստում ես ամեն
բանի մեջ:

Դու մի նզովչալ սրիկայախմբի հետ ես միացել,

Որ ինձ դարձնես ծաղրի առարկա,

Բայց ես կփորեմ այս եղունդներով այս կեղծ աչքերը,

Որոնք կամեցան ինձ այսպես անարդ ու ստոր տեսնել:

ԱԴՐԻԱՆԱ.— Կապեցե՛ք նրան, կապեցե՛ք նրան, չթողնե՛ք մոտ
դա:

ՊԻՆՉ.— Թող շատ մարդիկ գան, դուրեղ է նրա միջի չար դևը:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Վա՛յ ինձ. օ՛, խեղճ մարդ, ի՛նչ գումատ է նա:
Մտնում են երեք շորս մառդ և կապում են Անտիֆոնոս Եփեսոս-
ցուն:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ի՛նչ է, ուզում եք դուք ինձ սպանե՞լ:
Քո կալանավորն եմ, պարոնդ բանտապետ,
Եվ հանդուրժում եք նրանք ինձ տանե՞ն:

ՈՍՏԻԿԱՆ.— Զեռք չտաք նրան:

Նա բանտարկյալս է, թույլ չեմ տա տանեք:

ՊԻՆԶ.— Սրան էլ կապեք, նա նույնպես գիժ է:

Կապում են Դրոմիո Եփեսոսցուն:

ԱԴՐԻԱՆԱ.— Ի՛նչ ես անում դու, անսիրտ ոստիկան.

Զվարճալի՞ է միթե քեզ տեսնել այս թշվառ մարդուն
Իրեն ծեծելիս, և անարգելիս,

ՈՍՏԻԿԱՆ.— Նա իմ բանտարկյալն է. եթե արձակեմ,
Ես պետք է նրա պարտքը վճարեմ:

ԱԴՐԻԱՆԱ.— Ես ձեզ կազատեմ այդ նեղությունից.

Առաջնորդիր ինձ պարտատերի մոտ

Պարտքը կիմանամ և կվճարեմ:

Իմ բարի դուկտոր, հսկեք որ նրան

Իմ տունը տանեն: Օ՛, դժնդակ օր:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Օ՛, անառակ կին:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ես ձեր պատճառով կապվեցի, տեր իմ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Կորիք, սրիկա, ինչո՞ւ համար ես ինձ կատա-
ղեցնում:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Մի՞թե կարծում եք, որ ձեզ առանց պատճառի
են կապել: Կատաղեցեք, իմ բարի տերս. գոռացեք «ղե՛վը»:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Օ՛, փրկիր աստված խեղճ հոգիներին,

Ինչ սոսկալի են նրանք զառանցում:

ԱԴՐԻԱՆԱ.— Դե՛, տարեք նրան. քույր, դու ինձ հետ եկ:

Պինչը և իր մարդիկ գնում են տանելով Անտիֆոնոս Եփեսոս-
ցուն և Դրոմիո Եփեսոսցուն:

Ասացեք այժմ, ո՞ւմ պահանջով է նա ձերբակալվել:

ՈՍՏԻԿԱՆ.— Անշնչու կոչվող մի ոսկերիչի. դուք գիտե՞ք նրան:

ԱԴՐԻԱՆԱ.— Ես նրան գիտեմ. պարտքը որքա՞ն է:

ՈՍՏԻԿԱՆ.— Երկու հարյուր դոկատ:

ԱԴՐԻԱՆԱ.— Ինչո՞ւ համար է այդ պարտքը վերցրել:

ՈՍՏԻԿԱՆ.— Շղթայի համար, որը տվել է նրան Անջելոն:

ԱԴՐԻԱՆԱ.— Շղթան ինձ համար նա պատվեր տվեց, բայց այն չստացավ:

ԿՈՒՐՏԻՋԱՆՈՒՀԻ.— Ձեր ամուսինը այսօր կատաղած

ներս պրծավ իմ տուն, խեց մատանիս,

Որը ես այժմ իր մատին տեսա,

Հետո հանդիպեց նա ինձ փողոցում ձեռքին մի շղթա:

ԱԴՐԻԱՆԱ.— Կարող է. բայց ես շղթան չեմ տեսել:

Տար ինձ, ոստիկան, այդ ոսկերչի մոտ,

Շտապ ուզում եմ իմանալ ամբողջ ճշմարտությունը:

Մտնում եմ Անտիֆոնոս սիրակուզացիին սուրը ձեռքին և Դեդ-
միո սիրակուզացիին:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Օ՛, փրկիր աստված. նրանք դուրս են պրծել:

ԱԴՐԻԱՆԱ.— Եվ մերկ սրերով այստեղ են գալիս,

Եկեք մարդ կանչենք, որ կապեն նրանց:

ՈՍՏԻԿԱՆ.— Փախչե՛նք, կապանեն:

Ադրիանան, Լուսիանան և ոստիկանը գնում են:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ես նկատում եմ՝ այս վճուկները դողում են սը-
րից:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Նա, որ ուզում էր ձեր կինը դառնալ՝ փախչում է
ձեզնից:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Գնանք «Կենտավրոս», որ մեր իրերը այնտեղից
վերցնենք,

Մի քան եմ տենչում՝ ողջ և անվտանգ մեզ նավը նետենք:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Դուք ինձ լսեցեք, եկեք այս գիշերն այստեղ լու-
սացնենք. նրանք, վստահ եմ, ոչ մի վնաս չեն տա մեզ. ինք-
ներդ տեսաք, որ մեզ հետ քաղցր լեզվով են խոսում. մեզ ոսկի
են տալիս. կարծում եմ, որ այստեղի մարդիկ չայնքան բարի
են, որ եթե չլինեիր այն խելառ մասկուլտը, որը պահանջում

է, որ ես իր հետ ամուսնանամ, ապա սիրով կհամաձայնվեի
այստեղ մնալ և վհուկ դառնալ:
ԱՆՏԻՖ, ՍԻՐ.— Իսկ ես չեմ մնա մի գիշեր անգամ,
Քեկուզ այս ամբողջ քաղաքը ինձ տան.
Ուստի, շտապենք, որ մեր իրերը նաւ տանենք իսկույն:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեսարան առաջին— Մի փողոց մենաստանի առաջ:

Մտնում են երկրորդ վանառականը և Անջելոն:

Անջելո.— Յավում եմ, պարոն, որ ես ձեզ այստեղ երկար
պահեցի,

Բայց հաստատում եմ, որ նա ինձանից շղթան ստացավ,
Թեպետ նա ժխտեց անամոթաբար,

Որ չի ստացել:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Ինչպե՞ս է, որ այդ մարդը հարգված է ամ-
բողջ քաղաքում:

Անջելո.— Նրան ամենքը պատվում են, պարոն:

Նա մեծ վարկ ունի և շատ սիրված է,

Այս քաղաքի մեջ նրան հավասար ուրիշ մարդ չկա.

Նրա մի խոսքով ես կվստահեմ

Նրան իմ ամբողջ հարստությունը:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Կամաց խոսեցիք, կարծում եմ, որ նա չայս-
տեղ է դալիս:

Մտնում են Անտիֆոնոս սիրակուզացին և Դրոմիո սիրակու-
զացին:

Անջելո.— Այո, այդ նա է. և պարանոցից կախ է այն շղթան,
Որ հրեշավոր երգումով պնդեց թե չի ստացել:

Սիրելի պարոն, ինձ մոտիկ կանգնեք,

Ես կամենում եմ խոսել նրա հետ:

Սինյոր Անտիֆոնոս, շատ եմ դարմանում,

Որ դուք ինձ այդպես խայտառակեցիք,—

Ինքներդ էլ ոչ քիչ վարկաբեկվելով—

Ուրանալով շղթան,

- Որք բացահայտ այժմ կրում եք:
 Բացի նրանից, որ հարկադրեցիք,
 Ինձ կալանեւում և անպատվելու,
 Վնաս հասցրիք դուք նաև իմ այս ազնիվ ընկերոջ,
 Որն եթե այստեղ չպահվեր մեր այս վեճի պատճառով,
 Այսօր առագաստ պարզած կլինէր բայ ծովի վրա:
 Այս շղթան, պարոն, ինձնից ստացաք. կարո՞ղ եք ժխտել:
 ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Կարծում եմ ես այն ձևից ստացա, երբեք չեմ
 ժխտել:
 Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Ժխտել եք, պարոն, երդվել եք անգամ:
 ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Իսկ ո՞վ է լսել որ ժխտել եմ այդ, կամ երդվել
 անգամ:
 Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Դու ինքդ դիտես, այս տկանջները քեզնից
 լսեցին:
 Թո՛ւ՛հ, թշվառական, մի՞թե արիստ չէ,
 Որ դու շրջում ես այնտեղ, ուր ազնիվ մարդիկ են ապրում:
 ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դու սրիկա ես, որ հանդգնում ես ինձ վիրավորել:
 Իմ ազնվությունն ու պատիվը, տես,
 Ես կապացուցեմ քեզ վաշդակեղևի,
 Բե համարձակ ես, կանգնի՛ր դեմառդեմ:
 Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Համարձակվում եմ և անվանում եմ ես քեզ
 սրիկա:

Մերկացնում են սրերը:

Մտնում են Ադրիանան, Լուսիանան, Կուրտիզանուհին և
 ուրիշները:

- ԱԴՐԻԱՆԱ.— Ձե՛րք շտաք նրան, նա խելագար է:
 Բռնեցեք նրան, ձեռքից սուրն առեք,
 Դրոմիոյին էլ կապեք և նրանց իմ տունը բերեք:
 ԴՐՈՄ. ՍԻՐ.— Փախչե՛նք, պարոն, փախչե՛նք,
 Ի սեր աստծո, ապաստան դռներն:
 Ահա այս վանքը, թաքնվենք այնտեղ, թե չէ, կորած ենք:

Անտիֆոնոս սիրականացին և Դրոմիոն սիրականացին մտնում
են վամբը:

Մտնում է վանամայրը:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Խաղաղվեք, մարդիկ, ինչպէս եք այստեղ այդպէս
խոնվում:

ԱԴՐԻԱՆԱ.— Որ վանքից հանենք իմ խելագարված թշվառ
ամուսնուն:

Թույլ տվեք ներս գալ, որ ամուր կապենք

Նվ բժշկելու՝ տուն տանենք նրան:

ԱՆՋՆԸ.— Ես գիտեի, որ խելքը պիտի չէր:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Յավում եմ ես այժմ, որ նրա վրա սուրս
մերկացրի:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Երբվանից է նա այդպէս դիվահար:

ԱԴՐԻԱՆԱ.— Այս ամբողջ շաբաթ նա ծանր էր, մոռալ,

Տրտում և սաստիկ տարբեր նախկինից.

Բայց մինչ այս կեսօր՝ հիվանդությունը

Երբեք չէր հասել այդ կատաղության:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Նավաբեկությամբ չի՞ զրկվել արդյոք
հարստությունից.

Նվ կամ թաղել է մի անգին ընկեր. կամ թե աչքերը

Իր սիրտն են դնում անօրեն սիրով.

Մի մեղք, որ շատ է տիրական բոլոր ջահելների մոտ,—

Որոնք սիրում են ազատություն տալ իրենց աչքերին:—

Նա այս վշտերից որի՞ն է դերի:

ԱԴՐԻԱՆԱ.— Դրանցից ոչ մեկին, բացի վերջինից:

Այսինքն սերը, որ նրան հաճախ քշում էր տանից:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Այդ բանի համար պարտավոր էիք նրան կշտամբ
բել:

ԱԴՐԻԱՆԱ.— Ես այդ արել եմ:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Բայց գուցե մեղմ էք կշտամբել նրան:

ԱԴՐԻԱՆԱ.— Պարկեշտությունս է որքան թույլ տվել:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Անշուշտ առանձին:

ԱԴՐԻԱՆԱ.— Մարդկանց մոտ նույնպէս:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Սակայն, երեի, ոչ այնքան հաճախ:

ԱԴՐԻԱՆԱ.— Մեր խոսակցության նյութը միշտ դա էր.

Ես կշտամբել եմ նրան քնելիս,
 Հանգիստ չեմ տվել նրան ուտելիս,
 Նախատել եմ միշտ մենակ մնալիս,
 Մարդկանց մոտ հաճախ ես նույնն եմ ասել,
 Եվ անվերջ կրկնել, որ իր վարմունքը ստոր է ու գարշ:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Եվ դրանից էլ խելագարվել է:
 Միշտ խանդոտ կնոջ թունոտ խոսքերը
 Ավելի թունոտ ու մահացու են,
 Քան թե կատաղած շան լատամները:
 Դու նրա քունը միշտ վրդովել ես նախատինքներով,
 Ահա թե ինչու նա կորցրել է իր դատողությունը:
 Դու ասում ես, թե միշտ կշտամբել ես նրան ճաշելիս.
 Վրդոված ճաշը թունավորում է մարսողությունը,
 Դրանից միայն առաջանում է սարսափելի ջերմ,
 Իսկ ի՞նչ է ջերմը—գժուկյան նոպա:
 Ասում ես, որ իր զվարճանքները
 Դու խռովել ես անվերջ վեճերով,
 Իսկ զվարճության արգելակումը ոչինչ չի բերում,
 Բացի վշտից ու մռայլ թախիծից,
 Որն ազգական է ժանտ ու անսփոփ հուսահատություն,
 Եվ կրնակալիս նրանց գալիս են ցավեր խոնված՝
 Կյանքին թշնամի դժգույն վարակներ:
 Երբ վրդովված են թե՛ ճաշ, և թե՛ խինդ, թե՛ կազդուրիչ քուն,
 Իր խելքն է կորցնում մարդ և անասուն:
 Եվ այդ ամենից եզրակացնում եմ լահա թե ինչ բան—
 Չեր խանդն է միակ պատճառը նրա խելագարության:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Նա քնքշորեն է նրան կշտամբել,
 Իսկ նա մշտապես կոպիտ, վայրենի և բիրտ է եղել:
 Ինչո՞ւ ես լուռ, քեզ նախատում են:
ԱԴՐԻԱՆԱ.— Նա՛ մատնեց ինձ իմ սեփական խղճին:
 Վանք մտեք, մարդիկ, դո՛ւրս բերեք նրան:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Ո՛չ, չի մտնելու ոչ ոք իմ տունը:
ԱԴՐԻԱՆԱ.— Եթե այդպես է, ձեր ծառաները
 Թող իմ ամուսնուն այնտեղից հանեն:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Չեմ թույլ տա և այդ. նա իմ տունն ընտրեց
 սուրբ ապաստարան:

Եվ նա կփրկի ձեր ձեռքից՝ նրան,
Մինչև կորցրած դատողութիւնը ետ բերեմ վրան,
Կամ թե համոզվեմ, որ ապարդշուն է անցել ամեն բան:
ԱԴՐԻԱՆԱ.— Ես կամենում եմ ամուսնուս տեսնել, լինել նրան
դայակ,

Բժշկել նրան. չէ՞ որ դա իմ պարտքն է,
Ինձ հարկավոր չէ ոչ մի օգնական,
Ուստի, թույլ տվեք տուն տանեմ նրան:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Համբերիր, նրան թույլ չեմ տա գնալ,
Մինչև չփորձեմ ինձ հայտնի բոլոր միջոցները ես
Օշարակներով, համեմունքներով, սուրբ աղոթքներով,
Առաջվա նման օրինավոր մարդ դարձնելով նրան,
Դա ճշուղն է և մի մասն է իմ ուխտի,
Իմ կոչման պարտքն է մարդասիրական:
Ուստի հեռացիր և ինձ թող նրան:

ԱԴՐԻԱՆԱ.— Ես չեմ հեռանա, և իմ ամուսնուն այստեղ չեմ
թողնի.

Ձեր սրբությանը երբեք սլատիվ չէ
Ամուսիններին իրարից դատել:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Լո՛ւի՛ր և գնա. նրան չեմ տա քեզ:

Գնում է:

ԼՈՒՍԻԱՆԱ.— Դուքսին գանգատվիր դու այս անարգալ վար-
մունքի համար:

ԱԴՐԻԱՆԱ.— Գնանք, ես կընկնեմ նրա ոտքերը
Եվ չեմ բարձրանա՝ մինչև իմ աղոթքն ու արցունքները
Ջատիպեն նրան անձամբ այստեղ գալ
Ուժով խլելու իմ ամուսնուն այս վանամոր ձեռքից:
Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Կարծեմ սլաքները ցույց են տալիս հինգ.

Եվ դուքսը պետք է այստեղով անցնի,
Գնալու դեպի Տրամության Հովիտ,—
Մահվան և պատժի ահավոր վայրը,—
Որ դռնվում է այս մենաստանի խանդակի ետև:

ԱՆՋԵԼՈ.— Ինչո՞ւ է գնում:

Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Տեսնելու մահը սիրակուղացի վաճառականի,
Որն այս քաղաքի օրենքն ու կարգը ոտնահարելով

Նաւով մտել է մեր ծովածոցը.

Եւ զլիսատման է դատապարտված նա հանրության առաջ:
ԱՆՋԵԼՈ.— Տեսե՛ք, գալիս են. մենք էլ ենք նրա մահը դիտելու:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Նախքան այս վանքի մոտով անցնելը,

Մունկ չոքիր դուքսի ոտքերի առաջ:

Մտնում են Դուսն իր շխմբով. էգեռնը զլսաբաց, դա-
հիւնը և այլ ուտիկաններ:

ԴՈՒՔՍ.— Մի անգամ ևս հայտարարեցեք ի լուր ամենքի.

Եթե գտնվի մի բարեկամ մարդ, որը վճարե

Պահանջված գումարն այս մարդու համար,

Նա չի՛ գլխատվի. սրտանց ենք ուզում Կապիցի նրան:

ԱԴՐԻԱՆԱ.— Վանամոր հանդեպ արդար դատ լարա, ով սրբազան
դուքս:

ԴՈՒՔՍ.— Նա առաքինի և պարկեշտ կին է,

Անհնարին է, որ նա ձեզ չարիք պատճառած լինի:

ԱԴՐԻԱՆԱ.— Լսեցեք դուք ինձ, ձերդ վսեմություն:

Անտիֆոլուսը, իմ ամուսինը,

Որին ես իշխան կարգեցի անձիս

Եւ իմ բովանդակ հարստությանը ձեր խորհուրդներով,

Այս դժբախտ օրը

Խելագարության սոսկալի ջերմով բռնվեց հանկարծ,

Եւ նա կատաղած, իր ծառայի հետ,—

Որը իր նման խելագարվել է,—

Դուրս վազեց փողոց ահաբեկելով բնակիչներին,

Խուժելով նրանց կացարանները, խլելով նրանց

Մատանիները, գոհարեղենը և այն ամենը,

Ինչ դուր էր գալիս իր գրծությանը:

Վերջապես նրան ամուր կապելով ուղարկեցի տուն,

Իսկ ես սկսեցի քաղաքում շրջել

Եւ իր գծության պատճառած ամբողջ վնասն հատուցել:

Հանկարծ, չգիտեմ թե ինչ հրաշքով,

Իր պահակների ձեռքից փախչելով,—

Նրա հետ էր և իր գրծված ծառան,—

Կատաղությամբ լի և մերկ սրերով

Հանդիպեցին մեզ նրանք փողոցում
Եվ հարձակվելով մեզ հալածեցին:
Օգնություն ստանալով, նրանց կապեցինք:

Բայց նրանք փախան և թաքնվեցին շահ այս վանքում,
Նրանց ետևից վազեցինք այստեղ,
Բայց վանամայրը փակեց մեր առաջ վանքի դռները:
Ոչ թույլ է տալիս մտնել և ներսից դուրս բերել նրան,
Ոչ ինքն է հանձնում, որպեսզի տանեմ:
Ուստի, պայծառ դուքս, ձեր հրամանով
Թող այստեղ բերվի իմ ամուսինը,
Որ կարողանամ ես նրան օգնել:

ԴՈՒՐՍ.— Քո ամուսինը տարիներ առաջ

Ծառայել է ինձ պատերազմներում:
Երբ ամուսնական քո առագաստը հանձնեցիր նրան,
Ես էլ իշխանի խոսք տվեցի քեզ,
Նրան օգնելու, ինչով կարող եմ:
Թող մեկնումեկը ձեզանից վանքի դարպասը ծեծե
Եվ վանամորը ասի ինձ մոտ դա:
Մեկնելուց առաջ իմ պարտքն է լրիվ լճուկ այս գործը:

Մտնում է մի սպասավոր:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Օ, տիկի՛ն, տիկի՛ն, փախե՛ք, փրկե՛ք ձեզ:

Իմ տերն ու ստրուկը կապերն են կտրել,
Ծեծել են բոլոր աղախիններին. դոկտորին կապել
Եվ իր մորուքին կրակ են տվել:
Երբ նա վառվել է, նրանք հրդեհը մարելու համար
Մեծ տաշտակներով լվացքի ջուր են մորուքին լցրել:
Այժմ իմ տերը համբերություն է քարոզում նրան,
Իսկ իր խենթ ծառան մկրտաւորով նրա մազերն է խուզում
Որպես դժվածի: Եթե չուղարկեք շտապ օգնություն
Դիվահմային կսպանեն նրանք:

ԱԴՐԻԱՆԱ.— Պապանձվիր, հիմար, քո տերը և իր ծառան
այստեղ են,

Ինչ որ պատմեցիր բոլորը սուտ է:

ՍՊԱՍԱՎՈՐ.— Իմ կյանքը վկա, ճիշտ եմ ասում, տիկին,
Տեսնելուց հետո ես շնչակտուր այստեղ եմ վազել:
Նա ձեզ է փնտրում և երգվում է, և թե ձեզ բռնի՝
Ձեր ամբողջ դեմքը կրակով կայրի և կալանդակի:

Խորհում լսվում է աղմուկ:

Ա՛յ լսե՛ք, լսե՛ք. նրա ձայնն է, տիկին, փախե՛ք, փրկե՛ք ձեզ:
ԴՈՒԲՍ.— Կողքիս կանգնեցեք. չվախենաք ոչնչից:

Պահակներ, պատրա՛ստ ձեր նիզակները:

ԱԴՐԻԱՆԱ.— Վա՛յ ինձ, ահա իմ ամուսինը: Դուք վկա եղեք,
Որ հայտնվում է նա աներևույթ.

Հենց նոր նա մտավ ահա այս վանքը,

Այժմ այնտեղ է. դա մարդու խելքից՝ ու մտքից վեր է:

Մտնում են Անտիֆոնոս Եփեսոսցին և Դրոմիո Եփեսոսցին:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Արդար դատ արա, մեծաշնորհ դուքս,

Օ, ինձ շնորհիր արդարությունը.

Հանուն վաղեմի այն ծառայության,

Երբ կռվում, ինձնով քեզ պատսպարած, կյանքդ փրկեցի,—

Խորունկ վերքերով մարմինս ծածկած.— քեզ համար կորցրած

Իմ այն արյունով արդարություն և մանրորում քեզանից:

ԷԳԵՈՆ.— Եթե չեմ ցնդել մահվան սարսափից,

Ուրեմն, դեմս տեսնում եմ որդուս՝ Անտիֆոնոսին,

Եվ Դրոմիոյին:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Արդար դատ արա, դերազնիվ իշխան.

Նա, որին դու ինձ կնություն տվիր,

Նա վիրավորեց ու անպատվեց ինձ.

Անհնարին է երեակայությունք պատկերել անգամ

Այն նախատինքը, որ նա լրբաբար ինձ հասցրեց այսօր:

ԴՈՒԲՍ.— Ասա թե ինչպես, և իմ վճիռը կլինի արդար:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Այսօր, ազնիվ դուքս, նա իմ դռները ինձ վրա
փակեց,

Իսկ ինքը ներսում սրիկաների հետ քեֆ արավ իմ առն:

ԴՈՒԲՍ.— Դա ծանր մեղք է: Ասա դու ինձ, կին, այդպես արե՞լ
ես:

ԱՌՐԻԱՆԱ.— Ոչ, բարեբար տեր: Ես, նա և քույրս մի տեղ ենք
ճաշել:

Հոգուս փրկությամբ, երզվում եմ, իշխան,

Այն մեղքը, որ ինձ վրա է բարդում—զրպարտություն է:
ԼՈՒՍԻԱՆԱ.— Ձերըդ բարձրություն, թող հավատ զրկվեմ արևի,
լույսից և անքուն մնամ,

Թե որ ճշմարիտ չի ասում քույրս:

ԱՆՋԵԼՈ.— Օ, խաբեբա կին: Երկուան էլ ասում են:

Այդ բանում զրանց այս խելագարը ճիշտ է մեղադրում:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Իշխան իմ, գիտեմ թե ինչ եմ խոսում.

Ոչ միազնել եմ ինձ գինու մոմով,

Ոչ կատաղել եմ, որը արդյունք է խելագարության,

Չնայած նման վիրավորանքը կարող էր անգամ

Իմաստունին էլ խելագար դարձնել:

Այս կինը այսօր տանս դռները իմ առաջ փակեց,

Երբ վերադարձա ես տուն ճաշելու:

Այս ոսկերիչը, որն իմ կնոջ հետ

Թե համախոհ չէր, կարող էր վկայել,

Որովհետև նա ինձ հետ է եղել:

Ապա նա գնաց շղթան բերելու,

Խոստանալով այն բերելու պանդուխտ,

Որտեղ Բալտազարն ու ես ճաշեցինք:

Երբ ճաշն ավարտվեց և նա ետ չեկավ

Դուրս և կա քաղաք նրան փնտրելու.

Եվ տեսա նրան հանկարծ փողոցում, այս պարոնի հետ:

Այնտեղ ուխտագրուծ այս ոսկերիչը սկսեց երգվել,

Որ իբր այսօր ես ստացել եմ շղթան՝ իրենից,

Որը,—երզվում եմ,— ես տեսած չկամ:

Դրա համար էլ նա հրամայեց մի ոստիկանի

Ինձ ձերբակալել. ես ենթարկվեցի,

Եվ իմ ծառային ուղարկեցի տուն, որ ինձ փող բերի,

Բայց՝ վերադարձավ նա առանց փողի:

Ապա սիրավիր սկսեցի խնդրել ես ոստիկանին,

Ինձ հետ տուն գալու:

Ծամփով անցնելիս մենք հանդիպեցինք

Իմ կնոջը և նրա քրոջը

Համախառնների սրիկայական մի խմբակի հետ,
 Որոնք իրենց հետ բերում էին նաև Պինչ կոչվող մեկի,
 Յամաքած դեմքով մի անպիտանի,
 Մի շոր կմախքի, մի խաբեբայի,
 Մի ձեռնածուի, բախտագուշակի,
 Փոս ընկած աչքերով և բարակադեմ,
 Կենդանի դիակ դարձած մի մարդու։ Այդ դորշ ստրուկը,
 Իրեն մի կախարդ բժիշկ ձևացրած,
 Սկսեց նայել իմ աչքերի մեջ, երակս զննել,
 Եվ իր զզվելի դունչը համարյա երեսիս դրած
 Բարձրաձայն գոչեց, որ սատանան է բուն դրել իմ մեջ։
 Այստեղ ամենքը թափվեցին վրաս, ինձ կապկապեցին,
 Քարշ տվեցին տուն և բանտարկեցին
 Խոնավ ու խավար մի նկուղի մեջ։
 Ինձ հետ կապեցին և իմ ծառային.
 Սակայն կրծելով իմ կապանքները և ազատվելով,
 Ձեր պայծառության մոտ վազեցի ես
 Խնդրելու ձեզնից լրիվ հատուցում
 Այս անարգանքի և անպատմելի բռնության համար։
ԱՆՋԵԼՈՒ.— Իշխան իմ, ես իմ կողմից կարող եմ վկայել, որ նա
 Տանը չի ճաշել և դուռն իր առաջ փակված էր ներսից։
ԴՈՒՔՍ.— Բայց, ստացե՞լ է շղթան ձեզանից։
ԱՆՋԵԼՈՒ.— Այո, իշխան իմ. և երբ քիչ առաջ նա մտավ այս
 տուն,

Բոլորն այդ շղթան տեսան իր վզին։
Բ. ՎԱՃԱՌԱԿԱՆ.— Դրանից բացի, պատրաստ եմ երդվել,
 Այս ականջներովս լսեցի, ինչպես խոստովանեցիք,
 Որ ստացել եք շղթան նրանից,
 Մինչդեռ շուկայում, դրանից առաջ
 Դուք երդվում էիք, որ չեք ստացել։
 Այստեղ ձեզ վրա սուրս մերկացրի,
 Եվ դուք փախչելով մտաք այս վանքը,
 Որտեղից այժմ կարծես հրաշքով մեղ երևացիք։
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես այս վանքի մեջ երբեք չեմ մտել,
 Ոչ էլ ինձ վրա սուր եք մերկացրել.
 Երկիրքը վկա, շղթա չեմ տեսել.

Ինչ որ բարդում եք ինձ վրա այժմ, բոլորը սուտ է:
ԴՌՈՒՔՍ.— Օ, այս ամենը ինչ խճճված է:
Կարծես բոլորդ էլ խմել եք Կիրկեի կախարդ գավաթից:
Եթե տեսել եք նա վանք է մտել—
Ուրեմն այժմ այնտեղ կլինեք.
Թե նա գիժ լինեք, չէր կարողանա
Իրեն պաշտպանել այդքան ողջամիտ.
Դուք ասում եք, թե նա տանն է ճաշել,
Ոսկերիչն ասում է տանը չի ճաշել,
Իսկ դու ի՞նչ կասես:

ԴՌՈՒՄ. ԵՓԵՍ.— Մեծագոր իշխան,

Նա այս կնոջ հետ պանդուկում ճաշեց:
ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՂԻ.— Այո, նա ճաշեց և այդ մատանին կորզեց իմ
մատից:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ճիշտ է այդ, տե՛ր իմ, ես այդ մատանին նրա-
նից վերցրի:

ԴՌՈՒՔՍ.— Դու նրան տեսա՞ր վանքը մտնելիս:

ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՂԻ.— Այնքան պարզ, տե՛ր իմ, ինչպես տեսնում
եմ ձեր բարձրությանը:

ԴՌՈՒՔՍ.— Տարօրինակ է. վանամորը շուտ այստեղ կանչեցեք.

Դուք կամ ցնորվել, կամ դառանցում եք:

Մի սպասավոր մտնում է վաճճը:

ԷԳԵՈՆ.— Ամենագոր դուքս, թույլ տուր՝ դեթ մի խոսք:

Ես գտա մեկին, որը կարող է փրկել իմ կյանքը

Ձեզ վճարելով ամբողջ փրկանքը:

ԴՌՈՒՔՍ.— Անկաշկանդ խոսիր, սիրակուղացի:

ԷԳԵՈՆ.— Ձեր անունը, պարոն, Անտիֆոլոս չէ՞,

եվ ձեր այդ ճորտը Դրոմիո չի՞ կոչվում:

ԴՌՈՒՄ. ԵՓԵՍ.— Ես մի ժամ առաջ նրա ճորտն էի,

Բայց, փառք աստծո, նա ատամներով

Իմ պարանոցը երկու մաս արեց,

Այժմ Դրոմիոն եմ ազատագրված:

ԷԳԵՈՆ.— Երկուսդ էլ, անշուշտ, ինձ լավ հիշում եք:

ԴՌՈՒՄ. ԵՓԵՍ.— Ձեզանով, պարոն, մենք մեզ ենք հիշում,

Քանզի քիչ առաջ մենք էլ ձեզ նման կապկապված էինք:
Պինչի հիվանդն եք:

ԷԳԵՈՆ.— Ինչո՞ւ եք այդպիսի օտար նայում ինձ. դուք ինձ լավ
գիտեք:

ԱՆՏԻՖ.— ԵՓԵՍ.— Ես ձեզ տեսնում եմ առաջին անգամ:

ԷԳԵՈՆ.— Օ՛, ինձ փոխել է սոսկալի վիշտը,

Այն օրից ի վեր, երբ վերջին անգամ դուք բաժանվեցիք,
եվ ժամանակի ավերիչ ձեռքով

Ժամերը դեմքիս քաշել են խոր ու անծանոթ դժեր:

Սակայն ասա ինձ, մի՞թե՞ իմ ձայնն էլ դու չես ճանաչում:

ԱՆՏԻՖ.— ԵՓԵՍ.— Ոչ էլ քո ձայնը:

ԷԳԵՈՆ.— Ոչ էլ դո՞ւ, Դրոմիտ:

ԴՐՈՄ.— ԵՓԵՍ.— Ես նույնպես, պարոն:

ԷԳԵՈՆ.— Վստահ եմ, որ դու պիտի ճանաչես:

ԴՐՈՄ.— ԵՓԵՍ.— Վստահ եք, պարոն. իսկ վստահ եմ, որ չեմ
ճանաչում և երբ մի մարդ մի բան ժխտում է, դուք պարտավոր
եք նրան հավատալ:

ԷԳԵՈՆ.— Օ՛, չես ճանաչում և ձայնս անգամ:

Դաժան ժամանակ, յոթը կարճառոտ տարիների մեջ

Մի՞թե դու այնպես փշրեցիր ձայնս,

Որ իմ հարազատ զավակը անգամ

Չի կարողանում ճանաչել վշտից

Խռպտած նրա թույլ հնչյունները:

Թեպետ ձմեռը սառը ձյունով է ծածկել իմ դեմքը,

Եվ սառեցրել է արյունս բոլոր երակներին մեջ,

Կյանքիս երեկոն, սակայն դեռ զուրկ չէ հիշողությունից,

Իմ հանգչող ջահը դեռ ազոտ լույս է արձակում իր շուրջ,

Եվ իմ կիսախուլ ականջները դեռ լսում են մի քիչ.

Բոլոր վաղեմի այս վիպաները,— չեմ սխալվում ես,—

Ինձ շնչում են, որ դու իմ որդի Անտիֆոլոսն ես:

ԱՆՏԻՖ.— ԵՓԵՍ.— Ես ծնված օրից հորս չեմ տեսել:

ԷԳԵՈՆ.— Դու ինքդ գիտես. յոթ տարի առաջ

Սիրակուզայում մենք բաժանվեցինք. որդիս, միգուցե,

Դու ամաչում ես թշվառութեան մեջ ինձ ճանաչելու
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Դուքսը և բոլոր այն մարդիկ, որ ինձ գիտեն
քաղաքում,

Կարող են վկայել, որ դուք սխալ եք.

Ես Սիրակուզան չեմ տեսել կյանքում:

ԴՈՒՔՍ.— Սիրակուզացի, ես հաստատում եմ, որ քսան տարի

Անտիֆոնոսը ինձ մոտ է եղել Եփեսոսի մեջ,

Եվ այդ ժամանակ երբեք չի եղել նա Սիրակուզում:

Ես նկատում եմ, որ ծերութունից և ծանր վշտից

Դու ցնորել ես:

Մտնում է վաճառարը Անտիֆոնոս սիրակուզացու և Դրոմիո
սիրակուզացու մետ:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Ամենազոր դուքս, ահա այն մարդը, որն հալած-
ված է:

ԱԴՐԻԱՆԱ.— Դեմս տեսնում եմ երկու ամուսին,

Կամ աչքերս ինձ դավաճանում են:

ԴՈՒՔՍ.— Մեկը մյուսի ոգին է անշուշտ,

Նույնպես և սրանք: Ո՞րն է սրանցից իսկական մարդը

Եվ ո՞րն է ոգին. ո՞վ կշռի սրանց:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Ես Դրոմիոն եմ, հրամայիր թող մյուսը կորչի:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Դրոմիոն ես եմ, թող նա չքանա:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Դու էգե՞ոնն ես, թե՞ նրա ոգին:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Օ, իմ ծեր պարոն, ո՞վ է կապել քեզ:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Ով կապած լինի, ես արձակում եմ իր

կապանքները

Եվ ազատութեամբ իմ ամուսնուն եմ վաստակում կրկին:

Խոսիր, էգեոն, դու այն մարդը չե՞ս,

Որ ամուսնացար էմիլիայի հետ,

Որ մի երկունքով քեզ ծնեց երկու գեղեցիկ տղա:

Օ, եթե դու այն հին էգեոնն ես, լարդ խոսիր ինձ հետ,

Քո դեմ կանգնած է կի՛նդ՝ էմիլիան:

Եթե դու նա ես, ասա ուրեմն, ո՞ւր է այն տղան,

ԷԳԵՈՆ.— Թե չեմ երազում, դու էմիլիան ես,

Որ քեզ հետ լողաց
 ճակատագրական այն կայրից կապված:
ՎԱՆԱՄԱՅՐ.— Նրան էլ, ինձ էլ և Դրոմիոյին
 էպիդամնոնի բնակիչները փրկեցին ծովից,
 բայց Կորնիլիոսի բիրտ ձկնորսները
 Նրանցից ուժով խլեցին որդուս ու Դրոմիոյին,
 իսկ ինձ թողեցին էպիդամնոնցի ձկնորսների մոտ.
 Քե աշնուհետե ինչ դարձան նրանք, չեմ կարող ասել,
 Քե ես ինչ դարձա—ինքներդ եք տեսնում:
ԴՌԻՔՍ.— Այն պատմութիւնը, որ մենք լսեցինք այս

առավոտյան

Այժմ դառնում է լրիվ իրական:
 Այս եղիւս նման Անտիֆոլոսները,
 Եւ Դրոմիոներն ահա այս երկու,
 Որոնք պատկերն են կարծես մեկմեկու,
 Ինչպես և կնոջ լայն պատմութիւնը,
 Որ նաւաբեկ են եղել ծովի մեջ, ապացուցում են,
 Որ ծնողներ են սրանք այս երկու երեխաների,
 Որոնք իրերի բերումով այժմ տեսնում են իրար:
 Դու, Անտիֆոլոս, առաջին անգամ Կորնիլիոսի՞ց եկար:
ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ոչ, պարոն, ես չեմ, Սիրակուզայից ես եկա

այստեղ:

ԴՌԻՔՍ.— Բաժա՛ն կանգնեցեք, չգիտեմ որը ո՞րն է ձեզանից:
ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Պատվարժան իշխան, ես նա՛ եմ, որ Կորնիլիոսից
 եկավ:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Եւ ես նրա հետ:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ինձ ախտեղ բերեց հայտնի զորավար դուքս
 Մենաֆոնը—

Ձեր հորեղբայրը:

ԱԴՐԻԱՆԱ.— Ձեզանից այսօր ո՞վ ճաշեց ինձ հետ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ե՛ս, ազնիւ տիկին:

ԱԴՐԻԱՆԱ.— Ասացեք, դուք իմ ամուսինը չե՞ք:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես կասեմ որ ոչ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ես նույնպես տիկին,— չնայած նա ինձ

ամուսին կոչեց.

Իսկ այս օրիորդը, քույրն իր գեղեցիկ
Ինձ եղբայր կոչեց,—

Լուսիաճային:

Ինչ լայն ժամանակ ես ձեզ առաջի,
Հույս ունեմ, օրիորդ, գործով ցույց տալու,
Թե այս բոլորը, ինչ որ տեսնում ու լսում եմ այժմ,
Երազ չլինի:

ԱՆՋԵԼՈ.— Սա այն շղթան է, որ ինձնից առաջ:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Կարծում եմ՝ դա այն շղթան է, պարոն, ես չեմ
ուրանում:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Եվ այս շղթայի համար, դուք, պարոն,
Հրամայեցիք ինձ ձեռքակալել:

ԱՆՋԵԼՈ.— Ճիշտ է, ես նույնպես դա չեմ ուրանում:

ԱԳՐԻԱՆԱ.— Ես ձեզ փրկելու փող ուղարկեցի Դրոմիոյի հետ,
Բայց կարծում եմ նա փողը չբերեց:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ինձ հետ դուք ոչ մի փող չեք ուղարկել:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Այս ոսկու քսակը ձեզնից ստացա,
Որը ինձ բերեց ծառաս—Դրոմիոն:

Տեսնում եմ, մեզնից յուրաքանչյուրը

Մյուսի ծառային է անվերջ հանդիպել,

Ինձ ընդունել են նրա փոխարեն, իսկ նրան էլ իմ,

Եվ այդ է բոլոր այս սխալների պատճառը եղել:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ես այս փողերը տալիս եմ հորս, փրկելու հա-
մար:

ԴՈՒՔՍ.— Այդ հարկավորը չէ, ազատությունն եմ շնորհում հորդ:

ԿՈՒՐՏԻՉԱՆՈՒՀԻ.— Պարոն, ինձ տվեք իմ ադամանդը:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ահա նա, վերցրեք. շնորհակալ եմ լավ ճաշի
համար:

ՎԱՆԱՄԱՅՐ.— Մեծափառ դուքս իմ, նեղություն կրեք

Մեզ հետ միասին մտնել այս վանքը,

Կ'ելու համար մեր գլխով անցած բոլոր դեպքերը:

Եվ բոլոր նրանք, ովքեր խմբվել են այս վայրում այժմ,

Որոնց միօրյա այս սխալները՝ վիշտ պատճառեցին,
Թող ընկերանան մեզ ներս գնալու:
Մեծ ուրախությամբ մենք վարձահատույց կլինենք բոլորին:
Երեսուն տարի աշխարհից աշխարհ
Ես ձեզ եմ փնտրել, ով իմ որդիներ, և այժմ միայն
Ես ազատվում եմ այդ ծանր բեռից:
Դուքս, և իմ ամուսին, և իմ զավակներ
Եվ դուք, օրացույցներ նրանց ծնունդի,
Այսքան տանջանքից հետո ցնծագին
Եկեք ներս գնանք նրանց կնունքի ուրախ խնջույքին:
ԴՈՒՔՍ.— Ես սրտանց կուզեմ կնքահայր դառնալ:

Գնում են դուստր, վաճառայրը, էգեոնը, կուրտիզանունին,
Երկրորդ վաճառականը, Անջելոն և սպասավորները:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Իրերդ նավից տուն չբերե՞մ, տեր:

ԱՆՏԻՖ. ԵՓԵՍ.— Ասա, Դրոմիո, իսկ ինչ իրեր ես, դու նավին
բարձեղ:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Իրերդ, պարոն, որ «Կենտավրոս» էին:

ԱՆՏԻՖ. ՍԻՐ.— Ինձ հետ է խոսում: Լսիր, Դրոմիո, քո տերը ես
եմ:

Գնանք միասին, հետո կխորհենք իրերի մասին:

Դրկիր եղբորդ և ուրախացիր:

Գնում են Անտիֆոլոս սիրակուզացին, Անտիֆոլոս եփեսոսցին,
Ադրիանան և Լուսիանան:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Քո տիրոջ տանը մի հաստ կնիկ կա,

Որ քո փոխարեն խոհանոցի մեջ ինձ փակեց այսօր.

Այժմ կլինի նա ինձ համար քույր և ոչ թե տիկին:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Դու եղբայրս չես, այլ իմ հայեկին:

Քեզնով տեսնում եմ թե ինչ գեղեցիկ պատանի եմ ես:

Նրանց հանդեսը տեսնելու համար չգնա՞նք մենք ներս:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Առաջ դու մտիր, դու մեծ եղբայրն ես:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Այդ հարցական է, ինչպե՞ս լուծենք այն:

ԴՐՈՄ. ՍԻՐ.— Եկ վիճակ պցենք որոշելու մեր ավագութիւնը,

Իսկ մինչ այդ՝ ինքդ տուաջ ընթացիր:

ԴՐՈՄ. ԵՓԵՍ.— Ոչ, ա՛յդ էլ չեղաւ. եկ այսպես անենք.

Աշխարհ էնք էկել մենք որպէս եղբայր նույն ժամահատին,

Ուստի և պետք է ձեռք ձեռքի տված քայլենք միասին:

Գնում են:



Վ Ե Ր Զ